

Եվս մեկ քայլ՝

ԲԻԶՆԵՍԻՆ ԸՆԴԱՌԱԶ



Եռամսյա պարբերականությամբ
հրապարակվում է
«Հարկատու» ամսագիրը

**Բոլոր հարցերն
ունեն իրենց
պատասխանները՝**


www.tax.nk.am



6



12



16



20

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

tax ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

6

- 6 Վերականգնում, վերագինում, բարեկարգում
«Աղավն» հսկիչ կետը՝ նոր հնարավորություններով

tax ԼՈՒՐԵՐ

8

- 8 Ուզո՞ւմ եք խնդիրը լուծվի՝ խոսե՛ք
Տնտեսագիտության թեկնածու Կարեն Ներսիսյանի թիվ մեկ խորհուրդն է գործարարներին

- 9 Լինել հարկատուի կողքին.
տարվա նշանաբանը հեռանկարային արդյունք է երաշխավորում

tax ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

10

- 10 Պետբյուջեի եկամուտները 2011-ի առաջին կիսամյակում
Բյուջեի 66.9 տոկոսն ապահովվել է հարկային եկամուտների հաշվին

tax ՕՐԵՆՔ

12

- 12 Հարկային դաշտի վերջին փոփոխությունները
«Առողջացման» ծրագիր՝ Արցախում

tax ՈՇՊՈՐՏԱԺ

14

- 14 Առաջին տեղում բարոյահոգեբանական մթնոլորտն է.
պարտաճանաչ հարկատուներով հայտնի Հաղորդի տեսչության առանձնահատկությունն է

tax top

16

- 16 STOP ստվեր. տնտեսության ամբողջ շղթան՝ հարկային խոշորացույցի տակ
«Ապահովելով փաստաթղթավորման պահանջները՝ նվազագույնի ենք հասցնում ստվերի հետ կապված ռիսկերը»
Հարցազրույց ԼՂՀ ԿԱ հարկային պետական ծառայության պետի տեղակալ Արթուր Հարությունյանի հետ

tax ՀԱՐԿԱՏՈՒՆԵՐ

20

- 20 Խոշորների խոշորը.
Արցախի տնտեսության հսկա «Բեյզ Մեթըլս»-ն առաջին կիսամյակում 2մլրդ դրամից ավելի գումար է փոխանցել պետբյուջե



26



36



50



54

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

tax ՈԼՈՐՏ

26

- 26 Արցախյան IT տիրույթի հեռանկարները**
Հարցազրույց SS զարգացման կենտրոնի տնօրեն Վլադիմիր Գրիգորյանի հետ
- 28 «Հեքիաթային աշուն»-ից մինչև 3G. «Ղարաբաղ Տելեկոմ»-ը՝
նոր բարձունքներում**
«Լինել տեղական օպերատոր, նշանակում է պատասխանատվություն զգալ
յուրաքանչյուր արցախցու նկատմամբ», -ընկերության գործելաոճն է հիշեցնում
«Ղարաբաղ Տելեկոմ» ՓԲԸ գլխավոր տնօրենի տեղակալ Գեորգես Տերտերյանը
- 30 «AM», թե՞ «NK.AM»**
Պատկանելիություն խորհրդանշող վիրտուալ ZONA-ն ընդլայնվում է
- 32 «INNOVA»-ի տիրույթում մրցակցությանը տեղ չկա.
առաջնորդողն Արցախի շահն է**
Հարցազրույց «INNOVA»-ի տնօրեն Սերգեյ Գաբրիելյանի հետ

tax NON սպանդար

34

- 34 Արցախն Էներգետիկ անկախ պետություն է դառնալու**
Բիոէներգիան՝ լավագույն այլընտրանք
- 36 Բիո-նորույթը Էներգետիկ հեղափոխություն է խոստանում**
Պետական նշանակության կարևոր գործընթացը հաջողությամբ է սկսվել

tax ԲԻԶՆԵՍ

40

- 40 Հայացք՝ եվրոպատուհանից. MLM-ը՝ 15 տարի արցախյան շուկայում**
- 42 Խոշոր հարկատու «Արդշին կոմբինատ 1»-ը արցախյան
բիզնես-միջավայրում իրեն լավ է զգում**
- 44 Խորհրդայինից մինչև 21-րդ դար. «ԱԿ-3»-ը՝ նոր լուծումներով**
- 46 70-ամյա «Սիգմա»-ի երիտասարդ ծրագրերը**
- 50 Բանկային նորամուծություններ՝ «Արդշինինվեստբանկ»-ից**

tax ԱՇԽԱՐՀ

54

- 54 Դանիական Թագավորության հարկային համակարգը**

ԹԵԺ ԳԻԾ
Վստահություն
Հրատապություն
Հետևողականություն
(+374 47) 974-758



ԼՂՀ ԿԱ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ

ԹԻՎ 3(5) 2011

Գլխավոր խմբագիր՝
Նելլի Մանուչարյան

Հեղինակներ՝
Շաքե Ղազարյան
Արմինե Մուսայելյան
Նորայր Հովսեփյան

Արտ խումբ՝
Գևորգ Գաբրիելյան
Նելլի Բարսեղյան
Նաիրա Պետրոսյան

Գովազդ և մարկետինգ՝
Հեռ.՝ 94 86 20

Հրատարակության 2-րդ տարի
Ծավալը՝ 56 էջ
Տպաքանակը՝ 2000

Տրված է տպագրության
25.08.11

Հեռ.՝ 94-86-20
Էլ. փոստ՝ info@taxservice.nk.am

Մեջբերումներ անելիս հղումը
«Հարկատու» ամսագրին
պարտադիր է:

Ամսագրի հղվածների մասնակի կամ
ամբողջական հեռուստառադիոընթերցումն
առանց «Հարկատու» ամսագրին
վկայակոչելու արգելվում է:

Ամսագիրը տպագրվում է
«Այաս պրինտ» տպագրատանը


ՎԵՐԱԿԱՌՈՒՅՈՒՄ, ՎԵՐԱԶԻՆՈՒՄ, ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ

«Աղավնո» հսկիչ կետը՝ նոր հնարավորություններով

Այս օրվան տնտեսվարողները շատ են սպասել: Գորիս-Ստեփանակերտ ճանապարհով անցնող գործարարների ուշադրությունն ամիսներ շարունակ սահմանային հսկիչ կետում կատարվող վերանորոգման աշխատանքների վրա էր կենտրոնացված: Նրանք գիտակցում են՝ անցակետի շենքային պայմանները հարմարավետ են, ուրեմն իրենց գործն էլ ավելի արագ առաջ կգնա, սպասարկման որակն էլ, բնականաբար, կբարձրանա:

Այսօր արդեն մուտքը դեպի Արցախ ավելի տպավորիչ է՝ Հայաստանի հետ սահմանային անցակետն ամբողջությամբ վերակառուցվել է: Նախկին շինության փոխարեն այժմ տեսնում ենք 21-րդ դարի պահանջներին համապատասխանող երկհարկանի շենք, որի ներսում ևս ամբողջ գործընթացն իրականացվում է նորագույն տեխնիկայով: Հսկիչ կետում տեղադրվել են համակարգիչներ, տեսախցիկներ, հարկային ծառայության կենտրոնական ապարատի հետ շփումն էլ այլևս էլեկտրոնային է, ինչը հնարավորություն է տալիս իրական ժամանակում՝ on-line ռեժիմով հավաքագրել տեղեկատվությունը միասնական համակարգում և ֆիքսել հսկիչ կետով կատարվող ամբողջ շարժը:

Այս հատվածով գիշերային ժամերին անցնող տնտեսվարողները կորցնում են նաև ժամանակի զգացողությունը, քանի որ իրենց ընդունում, սպասարկում և «բարի ճանապարհ» են մաղթում լուսավոր պայմաններում: Լուծված է նաև անցակետի տարածքի լուսավորության հարցը: Իսկ եթե մի փոքր սպասելու անհրաժեշտություն է առաջանում, ապա Ձեր տրամադրության տակ է նաև բա-



Աղավնոն այն անցակետն է, որով իրականացվում է տնտեսվարողների գործարքների 98 տոկոսը:

րեկարգված կայանման կետը: Այս ամենի գլխավոր նպատակը Արցախի հետ շփվող մարդկանց, տնտեսվարողների հարմարավետությունն է:

Աղավնոյի հիմնական գործառնությունը ներմուծման և արտահանման գործընթացի կարգավորումն է: Հայկական երկու պետությունները մաքսային միասնական դաշտում են գործում, հետևաբար արցախյան սահմանային կետերը մաքսա-

տան գործառնություններ չեն կատարում: Իսկ Աղավնոն այն անցակետն է, որով իրականացվում է տնտեսվարողների գործարքների 98 տոկոսը: Այդ հանգամանքը հաշվի առնելով էլ վերակառուցման աշխատանքները սկսվել են հենց այդտեղից: Այդպիսով, միանշանակ, ավելի արդյունավետ է դառնում ԼՂՀ սահմանով իրականացվող ներմուծման արտահանման գործընթացի վերահսկողությունը, նոր մակարդակի է բերվում տնտեսության ստվերային հատվածի բացահայտումն ու կրճատումը:

Համակարգի բարեփոխումների ծրագրերը շարունակական են: Վերակառուցման և վերագինման հերթն առաջիկայում կհասնի նաև մյուս անցակետին: 

Բոլոր հարցերն
ունեն իրենց
պատասխանները՝

www.tax.nk.am



Արցախի պետական համալսարանի ֆինանսահաշվային ամբիոնի վարիչ, տնտեսագիտության թեկնածու Կարեն Ներսիսյանի թիվ մեկ խորհուրդն է գործարարներին:

ՈՒԶՈՐԻՄ ԵՔ ԽՆԴԻՐԸ ԼՈՒԾՎԻ՝ ԽՈՍԵ՛Ք

Ծարարները խոսում են հարկային արտոնություններ սահմանելու մասին: Բայց եկեք անկեղծ լինենք. կոնկրետ այս դեպքում արտոնությունները սահմանվել են հստակ հեռանկարով՝ արտոնյալ պայմանները պետք է ապահովեն արդեն տարիներ ի վեր կուտակվող պարտավորությունների գոնե մի մասի հավաքագրումը պետք է ձեռնարկատիրոջ, կարծում եմ,

հնարավոր է ամբողջությամբ կամ մասամբ ազատել հարկային պարտավորություններից, սակայն պետք է հստակեցվի՝ ի՞նչ է ստանալու պետությունն այդ արտոնությունների տրամադրման արդյունքում և ի՞նչ ժամանակահատվածում:

-Էական քայլեր են արվում նաև վարչարարությունը կատարելագործելու ուղղությամբ: Ձեր դիտարկմամբ, արդեն իսկ կատարված միջոցառումների արդյունքում հարկատուի համար որքանո՞վ է պարզեցվել դաշտը:

-Դա արդեն բարեփոխումների երկրորդ ուղղությունն է: Այստեղ կարող ենք առանձնացնել վարչարարության բարելավման ոլորտում ձեռնարկված քայլերը: Դրանց արդյունքում, միանշանակ, աստիճանաբար պարզեցվում են մի շարք ընթացակարգեր. օրինակ, հարկային մարմիններ կայացվող հաշվետվությունների թիվն է կրճատվել: Ավելին՝ ՓՄՁ ոլորտի բազմաթիվ ներ-

կայացուցիչների կողմից ներկայացվող հաշվետվությունները գրեթե կրկնակի են կրճատվել:

Կարևոր է կամերալ ստուգումների անցկացման փաստը և ուղղակի ստուգումները ռիսկային չափանիշների հիման վրա կազմակերպելը: Վստահ եմ՝ ուղղակի շփումների կրճատումը նաև կոռուպցիոն ռիսկերն է նվազեցնում:

-Պարոն Ներսիսյան, նման ծավալի բարեփոխումներ իրականացնելու համար կադրային լուրջ բազա է հարկավոր: Դուք՝ որպես Արցախի Մայր ԲՈՒՀ-ի տնտեսահաշվային ամբիոնի վարիչ, ի՞նչ եք կարծում, այս ոլորտն ապագայում հուսալի՞ ձեռքերում է:

-Սա շատ կարևոր հարց է: Կադրային բազայի համալրման ու երիտասարդացման առումով դրական եմ գնահատում հարկային պետական ծառայության և Արցախի պետական համալսարանի համագործակցությունը: Համալսարանականներից ոմանք արդեն աշխատանքի են անցել հարկային պետական ծառայությունում: Բացի այդ, բավականին հաճախակի են ուսանողների հանդիպումները ծառայության պատասխանատու պաշտոնյաների հետ: Մեր ուսանողները մասնակցում են նաև հարկային համակարգի վերաբերյալ անցկացվող սոցիալառարկային կազմակերպմանը: Այնպես որ, փորձում ենք հասնել նրան, որ համագործակցությունը լինի երկուստեք օգտակար:

Գործարարներից շատերը, սակայն, գերադասում են լռել հարկային ոլորտում ունեցած դժվարությունների մասին, այնինչ բարձրաձայնելու դեպքում դրանց կարգավորման հավանականությունն անհամեմատ մեծ կլինի:



-Այս տարի հարկային առաջին անգամ նաև հարկ վճարողների իրազեկման ծրագիր է հաստատել:

-Արցախյան հարկատուներն արդեն իսկ զգում են իրազեկման միջոցառումների դրական արդյունքները: Այդ նպատակով նոր մեխանիզմներ են ստեղծվել, գործում է կայքէջը, ամսագիր է հրատարակվում, պարբերական բնույթ կրող հանդիպումներ են անցկացվում մայրաքաղաքում և շրջաններում: Այդ ամենը, ինչ խոսք, ցանկալի արդյունքներ է տալիս: Ամեն դեպքում, բոլոր ուղղություններով էլ անելիքները դեռևս շատ են: Ընդ որում, այս գործում մեծ է ինչպես հարկային մարմնի, այնպես էլ՝ գործարար միջավայրի դերը: Պետք է փոխադարձ վստահություն լինի, խնդիրների մասին խոսել է պետք, այլ ոչ թե՝ լռել: Գործարարներից շատերը, սակայն, գերադասում են լռել հարկային ոլորտում ունեցած դժվարությունների մասին, այնինչ

Համալսարանականներից ոմանք արդեն աշխատանքի են անցել հարկային պետական ծառայությունում:



բարձրաձայնելու դեպքում դրանց կարգավորման հավանականությունն անհամեմատ մեծ կլինի: Հենց այստեղից է պետք սկսել:

Մեկ դիտարկում ևս. չունենք խորհրդատվական ծառայություն: Խոսքը ոչ

թե հարկային ծառայության աշխատակիցների կողմից մատուցվող ծառայության մասին է, այլ՝ մասնավոր կազմակերպությունների: Նույնը նաև հաշվապահական ծառայություններին է վերաբերում: Անգամ շրջանառության փոքր ծավալներ ունեցող կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերն են ստիպված հաշվապահ ունենալ, այնինչ դա կարելի է կազմակերպել կենտրոնացված եղանակով: Այս հարցերի մի մասի լուծումը հարկային պատերից դուրս է պետք որոնել: Դրանց կարգավորումը, համոզված եմ, դրական տեղաշարժ կապահովի նաև հարկային ծառայության աշխատանքներում: Իսկ իրականացված բարեփոխումներն, ընդհանուր առմամբ, դրական եմ գնահատում. դրանք պահանջված էին: Եվ որ ամենակարևորն է, այդ բարեփոխումները հասցեագրված են բոլորին: 

ԼԻՆԵԼ ՀԱՐԿԱՏՈՒԻ ԿՈՂՔԻՆ. ՏԱՐԿԱ ՆՇԱՆԱԲԱՆԸ ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆԸ Է ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒՄ

Հարկային ծառայության միասնական ռազմավարությունը՝ հանրային իրազեկման գործում: Սա այն ուղղություններից է, որն Արցախում հատուկ քննարկումների, վերլուծությունների թեմա է դարձել: Այսինքն՝ հանրային իրազեկումը լուրջ հիմքերի վրա է դրվում: Եվ այսպես, առաջին անգամ հաստատվել է համապատասխան ծրագիրը, որով սահմանված են 2011-ի ընթացքում իրականացվելիք միջոցառումները: Մասնագետները վստահ են, որ հանրային իրազեկման քաղաքականության հաջորդ փուլերի համար սա կարևորագույն քայլ է: Ի՞նչ է ենթադրում ծրագիրը և ի՞նչ է տալու այն հարկ վճարողին: Գլխավոր նպատակներից մեկը, բնականաբար, հարկատուին աջակցելն է՝ ճիշտ ընկալել և կիրառել հարկային օրենսդրությունը, հարկային գործունեության հրապարակայնություն և թափանցիկություն ապահովել. ծրագրում սա է անցնում կարմիր թելի նման: Եվ ոչ միայն դա: Ծրագրով նախատեսվող անվճար մատուցվող ծառայությունների ընտրության ժամանակ առաջնահերթությունը գործնական արդյունավետություն ունեցող հարցերին է տրվել, որոնք հարկ վճարողի համար բաց տեղ և հարցականներ չեն թողնում:

Իրազեկման արդյունքում հարկային հետ առնչվող յուրաքանչյուր քաղաքացի հստակ կիմանա՝ ինչպե՞ս ճիշտ կիրառել օրենքները, լրացնել հաշվետվությունները, տեղյակ լինել հարկային դաշտում արձանագրվող փոփոխություններին: Ավելին՝ օրենսդրությունն ավելի մատչելի մատուցելու նպատակով ծրագիրը նախատեսում է նաև ձեռնարկների, ուղեցույցների, բուկլետների, հրահանգների հրատարակում: Եթե ծրագրում նախատեսված միջոցառումները լիարժեք իրականացվեն, ապա կլուծվեն ակտիվ բարեփոխումների այս փուլի համար ամենակարևոր հարցերը. նոր մակարդակի կբերվի հարկային մարմին-հարկ վճարող փոխադարձ վստահության մթնոլորտի ձևավորումը և արդյունավետ, գործընկերային կապերի հաստատումը, նաև՝ հարկային կարգապահությունը: 

Ինչպե՞ս օգտվել «Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի համար հարկային և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին» ԼՂՀ օրենքով նախատեսված արտոնություններից, ի՞նչ իրավունքներ և հնարավորություններ ունի հարկ վճարողը: Հարկային ծառայության մասնագետներին համակարգի ղեկավարը հանձնարարել է՝ սեմինար-խորհրդակցություններ անցկացնել Ստեփանակերտի և բոլոր շրջանների հարկատուների համար, ովքեր պետք է տեղյակ լինեն բոլոր մանրամասներին: Ընդամենը հինգ օր է պահանջվել, որպեսզի բոլոր հարկատուները վերջին փոփոխությունների վերաբերյալ լիարժեք և սպառիչ տեղեկատվություն ստանան:

ՊԵՏԲՅՈՒՋԵՒ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ 2011-Ի ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿՈՒՄ

Բյուջեի 66.9 տոկոսն ապահովվել է հարկային եկամուտների հաշվին

ԼՂՀ պետական բյուջեի՝ այս տարվա առաջին կիսամյակի հարկային եկամուտները կազմել են շուրջ 7307236.9 հազ. դրամ՝ 4.8%-ով ավել ծրագրային մուտքերից: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ՝ պետբյուջեի հարկային եկամուտներն աճել են 731876.8 հազ. դրամով կամ՝ 11.1%-ով: Հարկային եկա-

հազ. դրամի մուտքեր՝ կազմելով պետական բյուջեի հարկային եկամուտների 13.6%-ը և ընդհանուր եկամուտների 9.1%-ը, այսինքն՝ ծրագրված ցուցանիշը գերակատարվել է 52488.9 հազ. դրամով կամ՝ 5.6%-ով: 2010թ. առաջին կիսամյակի համեմատ եկամտահարկի գծով պետբյուջեի մուտքերն աճել են 12.8%-ով կամ՝ 113189.8 հազ. դրամով:

Շահութահարկի գծով պետական բյուջեի եկամուտներն այս տարվա հունվար-հունիս ամիսներին կազմել են 915657.2 հազ. դրամ՝ ապահովելով հարկային եկամուտների 12.5%-ը և ընդհանուր եկամուտների 8.4%-ը. ծրագրված ցուցանիշը գերակատարվել է 4.2%-ով կամ 36507.2 հազ. դրամով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ շահութահարկի մուտքերն ավելացել են 166674.0 հազ. դրամով կամ 22.3% -ով:

Պետական բյուջեի հարկային եկամուտների կազմում ակցիզային հարկի

հաշվին ապահովվել են 158175.3 հազ. դրամի մուտքեր՝ կազմելով պետական բյուջեի հարկային եկամուտների 2.2%-ը, և ընդհանուր բյուջետային եկամուտների 1.4%-ը, պլանավորված ցուցանիշը գերակատարվել է 58175.3 հազ. դրամով կամ 58.2%-ով, իսկ նախորդ տարվա մակարդակը՝ 28.2%-ով կամ 34785.7 հազ. դրամով:

Հաշվետու ժամանակաշրջանում պետական բյուջե մուտքագրված հաստատագրված վճարների գումարը կազմել է 222522.4 հազ. դրամ՝ ապահովելով պետական բյուջեի հարկային եկամուտների 3%-ը. պլանավորված ցուցանիշը գերակատարվել է 29.2%-ով կամ 50312.4 հազ. դրամով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ հաստատագրված վճարների գծով մուտքերը նվազել են 21930.2 հազ. դրամով կամ 9%-ով:


Պետբյուջե մուտքագրված հարկային եկամուտների 9.8%-ն ապահովվել է

Ավելացված արժեքի հարկի գծով պետական բյուջեի մուտքերը կազմել են 3531696.6 հազ. դրամ՝ ապահովելով հարկային եկամուտների 48.3%-ը և ընդհանուր բյուջետային եկամուտների 32.3%-ը. ծրագրված ցուցանիշը կատարվել է 101%-ով:

մուտքների հաշվին է ապահովվել պետական բյուջեի եկամուտների 66.9%-ը: Գերակատարվել են պետական բյուջեի հարկային եկամուտների բոլոր եկամտատեսակների պլանային առաջադրանքները:

Ավելացված արժեքի հարկի գծով պետական բյուջեի մուտքերը կազմել են 3531696.6 հազ. դրամ՝ ապահովելով հարկային եկամուտների 48.3%-ը և ընդհանուր բյուջետային եկամուտների 32.3%-ը. ծրագրված ցուցանիշը կատարվել է 101%-ով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ԱԱՀ-ի գծով ԼՂՀ պետական բյուջեի մուտքերն աճել են 149991.4 հազ. դրամով կամ՝ 4.4%-ով:

Պետական բյուջեի հարկային եկամուտների կազմում ԱԱՀ-ից հետո իր կշռով երկրորդ հարկատեսակը եկամտահարկն է: Հաշվետու ժամանակահատվածում ապահովվել են 994638.9





առևտրի հարկի հաշվին: Այս հարկատեսակի գծով մուտքերը կազմել են 713860.3 հազ. դրամ՝ 15.3%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը, 11.2%-ով կամ 71710.3 հազ. դրամով՝ հաշվետու ժամանակաշրջանի պլանավորված ցուցանիշը:

Բնապահպանական և բնօգտագործման վճարների գծով պետբյուջե է մուտքագրվել 302855.4 հազ. դրամ, պլանավորված ցուցանիշը գերակատարվել է 2.7%-ով: 2010-ի առաջին կիսամյակի համեմատ վճարների գծով պետական բյուջեի մուտքերն աճել են 92942.2 հազ. դրամի չափով կամ՝ 44.3%-ով:

Ավտոճանապարհների շինարարության և նորոգման համար կատարվող մասհանումների մուտքերը հաշվետու ժամանակահատվածում կազմել են 256417.8 հազ. դրամ, նախատեսված ցուցանիշը գերակատարվել է 9327.8 հազ. դրամով կամ 3.8%-ով: Նախորդ տարվա առաջին կիսամյակի համեմատ մասհանումների գծով մուտքերն աճել են 15.6%-ով կամ 34611.9 հազ. դրամով:

Այլ հարկային եկամուտների գծով այս տարվա հունվար-հունիս ամիսներին բյուջե է մուտքագրվել 35355.3 հազ. դրամ, ինչը ծրագրված ցուցանիշը գերազանցել է 2224.0 հազ. դրամով կամ 6.7%-ով: Նախորդ տարվա համեմատ այլ հարկային եկամուտների գծով մուտքերը նվազել են 14.9%-ով կամ 6181.5 հազ. դրամի չափով:

Ռոյալթիի գծով նշված ժամանակահատվածում պետական բյուջեի եկամուտները կազմել են 145160.5 հազ. դրամ. ծրագրված ցուցանիշը կատարվել է 106.5%-ով կամ ավել 8832.5

հազ. դրամի չափով: Նախորդ տարվա համեմատ ռոյալթիի գծով մուտքերն աճել են 69.1%-ով:

Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների գծով ԼՂՀ պետական բյուջեի եկամուտներն առաջին կիսամյակում կազմել են 30897.2 հազ. դրամ. ծրագրված ցուցանիշը գերակատարվել է 0.7%-ով, իսկ նախորդ տարվա համեմատ աճել է շուրջ 1.8 անգամ:

ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐԵ

Պետական տուրքի գծով բյուջեի մուտքերն առաջին կիսամյակում կազմել են 179172.3 հազ. դրամ. դա պետբյուջեի ընդհանուր եկամուտների 1.6%-ն է: Այս մասով պլանավորված ցուցանիշը գերակատարվել է 28172.3 հազ. դրամով կամ 18.7%-ով: 2010թ. առաջին կիսամյակի համեմատ պետական տուրքի գծով մուտքերն էլ աճել են 9.1%-ով կամ 14893.8 հազ. դրամով:

ՊԱՐՏԱԴԻՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՅՈՎՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐ

Պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով ԼՂՀ պետական բյուջեի՝ 2011 թվականի առաջին կիսամյակի մուտքերը կազմել են 2972431.9 հազ. դրամ (ներառյալ 2011 թվականի առաջին կիսամյակի ծախսերի չափը՝ 244494.2 հազ. դրամ) կամ պլանավորված ցուցանիշը կատարվել է 103.5%-ով՝ ավել 100731.9

հազ. դրամով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ այս մասով մուտքերն աճել են 9%-ով կամ 245558.4 հազ. դրամով:

Եկամտահարկի գծով ապահովվել են 994638.9 հազ. դրամի մուտքեր՝ կազմելով պետական բյուջեի հարկային եկամուտների 13.6%-ը և ընդհանուր եկամուտների 9.1%-ը, այսինքն՝ ծրագրված ցուցանիշը գերակատարվել է 52488.9 հազ. դրամով կամ՝ 5.6%-ով:

Պետբյուջե մուտքագրված հարկային եկամուտների 9.8%-ն ապահովվել է առևտրի հարկի հաշվին:



Պետական բյուջեի՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների պլանային առաջադրանքների կատարման, հարկ վճարողների սպասարկման և վերահսկողական բնագավառներում կատարված աշխատանքների և այլ ցուցանիշների քննարկման նպատակով հարկային պետական ծառայությունում հատուկ խորհրդակցություն էր հրավիրվել՝ համակարգի ղեկավար Արտակ Բալայանի նախագահությամբ: Կատարված աշխատանքները, ձեռքբերումներն ու թերացումները ներկայացրել են սպասարկող ստորաբաժանումների ղեկավարները: Ծառայության պետն անդրադարձել է հարկ վճարողների իրազեկման միջոցառումներին: Հիշեցնենք, որ արդեն հաստատվել և գործողության մեջ է դրվել 2011թ.-ի հանրային իրազեկման միջոցառումների ծրագիրը, ինչի շրջանակներում սպասարկող ստորաբաժանումներին հանձնարարվեց ակտիվ աշխատանքներ տանել հարկ վճարողների իրազեկվածության ապահովման ուղղությամբ: Անդրադառնալով սպասարկող ստորաբաժանումների կողմից իրականացվող վերահսկողական աշխատանքներին, Արտակ Բալայանը նշել է, որ այսուհետ յուրաքանչյուր եռամսյակ ստորաբաժանումների կողմից ստուգումների ուղղությամբ իրականացվող աշխատանքները կգնահատվեն ըստ սահմանված չափանիշների, ինչը նպատակ ունի վերհանել այս ուղղությամբ իրականացվող աշխատանքների արդյունավետությունը: Խորհրդակցության ընթացքում քննարկվել են նաև ստորաբաժանումներում առկա խնդիրները և տրվել են համապատասխան հանձնարարականներ:

ՀԱՐԿԱՅԻՆ ԴԱՇՏԻ ՎԵՐՋԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Առողջացման» ծրագիր՝ Արցախում

«Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի համար հարկային և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին» ԼՂՀ օրենք

Կատարված փոփոխությունը վերաբերում է այն հարկ վճարողներին, ովքեր 2010 թվականի հունվարի 1-ի դրությամբ ունեն ստուգման ակտերով հաշվարկված ու չվճարված հարկային և այլ պարտադիր վճարների գծով պարտավորություններ և (կամ) 2011 թվականի մայիսի 1-ի դրությամբ ունեն հարկային և այլ պարտադիր վճարների գծով պարտավորություններ: Այսպես.

01.01.2010թ. դրությամբ ստուգման ակտերով ունեցած հարկային և այլ պարտադիր վճարների ապառքներն ամբողջությամբ և դրանց նկատմամբ հաշվարկված տույժերի 50%-ը սահմանված ժամանակացույցով մարելու դեպքում կազատվեն ստուգման ակտերով հաշվարկված տուգանքներից և 50% տույժերից:

01.05.2011թ. դրությամբ հարկային և այլ պարտադիր վճարների գծով ապառքներն ամբողջությամբ, իսկ տույժերի 20%-ը սահմանված ժամանակացույցով մարելու դեպքում, կազատվեն մնացորդ տույժերից և հարկային մարմնի գրասենյակում հաշվարկված տուգանքներից:

Հարկ վճարողներին իրավունք է տրվում մինչև 2011 թվականի սեպտեմբերի 1-ը հարկային մարմիններ ներկայացնել մինչև 2011 թվականի մայիսի 1-ն ընկած հաշվետու ժամանակաշրջանների համար ճշտված հաշվարկ-հաշվետվություններ, որի հետևանքով առաջացած ապառքներն ամբողջությամբ և տույժերի 20%-ը սահմանված ժամանակացույցով մարելու դեպքում կազատվեն ճշտված հաշվարկ-հաշվետվությունների ներկայացման արդյունքում առաջացած տուգանքներից և 80% տույժերից:

Հարկային և այլ պարտադիր վճարների պարտավորություն ունեցող այն հարկ վճարողները, որոնց նկատմամբ ներկայացված են բռնագանձման հայցեր, ևս կարող են օգտվել օրենքով սահմանված արտոնությունից՝ հարկային մարմնի հետ կնքելով հաշտության համաձայնություն:



Օրենքով նախատեսվող արտոնությունից օգտվելու նպատակով հարկ վճարողները պետք է մինչև 01.09.2011թ. դիմեն իրենց հաշվառման վայրի հարկային մարմին՝ հարկային պարտավորությունների մարման ժամանակացույցի հաստատման համար: Ընդ որում, ժամանակացույցով հաստատված գումարների մարման ժամկետը կախված կլինի հարկ վճարողի հարկային պարտավորության գումարից:

Օրենքով նախատեսվող արտոնությունից օգտվելու նպատակով հարկ վճարողները պետք է մինչև 01.09.2011թ. դիմեն իրենց հաշվառման վայրի հարկային մարմին՝ հարկային պարտավորություններ

Արտոնության
կիրառման առու-
մով պարտադիր է նաև
ժամանակացույցի ավարտին
հարկ վճարողի այլ հարկային
պարտավորություններ չունենալու
հանգամանքը: Ժամանակացույցի
պայմանների խախտման դեպքում
հարկային մարմինը պարտավո-
րությունների բռնագանձման
հայց կներկայացնի դա-
տարան:

րի մարման ժամանակացույցի հաստատման համար: Ընդ որում, ժամանակացույցով հաստատված գումարների մարման ժամկետը կախված կլինի հարկ վճարողի հարկային պարտավորության գումարից: Մասնավորապես.

- մինչև 30 մլն դրամ պարտավորություն ունեցող հարկ վճարողները գումարը մարում են 01.09.2011թ.-ից մինչև 29.02.2012թ.-ն ընկած ժամանակահատվածը՝ յուրաքանչյուր ամիս վճարելով պարտավորության գումարի (առանց արտոնության գումարի) առնվազն 1/6 մասը:

- 30 մլն և ավելի դրամ պարտավորություն ունեցող հարկ վճարողները գումարը մարում են 01.09.2011թ.-ից մինչև 31.08.2012թ.՝ յուրաքանչյուր ամիս վճարելով պարտավորության գումարի (առանց արտոնության գումարի) առնվազն 1/12 մասը:



Արտոնության կիրառման առումով պարտադիր է նաև ժամանակացույցի ավարտին հարկ վճարողի այլ հարկային պարտավորություններ չունենալու հանգամանքը: Ժամանակացույցի պայմանների խախտման դեպքում հարկային մարմինը պարտավորությունների բռնագանձման հայց կներկայացնի դատարան:

«Հաստատագրված վճարների մասին» ԼՂՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԼՂՀ օրենք

Այս օրենքում կատարված փոփոխությամբ՝ ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնելիս՝ հաստատագրված վճար վճարողներին իրավունք է վերապահվել տրանսպորտային միջոցը ԼՂՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ժամանակավորապես փոխարինել իրենց պատկանող միևնույն դասի այլ ավտոբուսներով: Դա կարող է կապված լինել տրանսպորտային միջոցի անսարքության, վարորդի հանգստի կամ այլ պատճառներով երթուղի դուրս չգալու հետ: Այդ պարագայում հաստատագրված վճարը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով նախապես հարկային մարմին ներկայացված՝ փոխարինված տրանսպորտային միջոցի ելակետային տվյալները: Օրենքով սահմանվում է հետևյալը. ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնելու համար ամսվա ընթացքում

Ուղևորների
կանոնավոր փոխադ-
րումներ իրականացնելու
համար ամսվա ընթացքում
տվյալ երթուղու համար հաստատ-
ված չվացուցակի օրերը կկիրառվեն
ոչ թե յուրաքանչյուր տրանսպորտային
միջոցի համար առանձին վերցված, այլ
ամսվա ընթացքում տվյալ երթուղին
սպասարկած և հարկային մարմնում
հայտարարագրված տրանսպոր-
տային միջոցների հանրա-
գումարով:



տվյալ երթուղու համար հաստատված չվացուցակի օրերը կկիրառվեն ոչ թե յուրաքանչյուր տրանսպորտային միջոցի համար առանձին վերցված, այլ ամսվա ընթացքում տվյալ երթուղին սպասարկած և հարկային մարմնում հայտարարագրված տրանսպորտային միջոցների հանրագումարով:



Հաղորդը զարգացման մեծ ներուժ ունեցող շրջան է, որտեղ պետությունը նախատեսում է մի շարք խոշոր ծրագրեր իրականացնել, հատկապես՝ գյուղատնտեսության և վերամշակող արդյունաբերության ոլորտներում: Սա է ընդգծել Արցախի դեկավար Բակո Սահակյանը՝ Հաղորդ կատարած հերթական աշխատանքային այցի ժամանակ: Նախագահը վստահ է՝ օրակարգում ընդգրկված բոլոր ծրագրերն էապես կբարելավեն ու կաշխուժացնեն ոչ միայն այս շրջանի, այլ ամբողջ հանրապետության տնտեսական կյանքը: Այս գործում էական է մասնավորապես տեղական ինքնակառավարման մարմինների աշխատանքը, և, իհարկե, հարազատ շրջանի զարգացմամբ մտահոգ բարերարների ակտիվությունը: Այս պարագայում կարևոր է նաև բարենպաստ հարկային դաշտի ձևավորումը, որտեղ բիզնեսն իրեն հարմարավետ կգտա:

ԱՌԱՋԻՆ ՏԵՂՈՒՄ ԲԱՐՈՅԱՅՈՒԳԵԲԱՆԱԿԱՆ ՄԹՆՈԼՈՐՏՆ Է.

կարգապահ և պարտաճանաչ հարկատուներ ունեցող Հաղորդի տեսչության առանձնահատկությունն է

-Պարոն Բալայան, այս տարվա առաջին կիսամյակում ի՞նչ ցուցանիշներ է արձանագրել Հաղորդի հարկային տեսչությունը:

-2011-ի հունվար-հունիս ամիսներին մեր կողմից հավաքագրված հարկային եկամուտները, տուրքերը և պարտադիր

սոցիալական ապահովության վճարները կազմել են շուրջ 233793.1 հազար դրամ, ինչը պլանավորված ցուցանիշը գերազանցել է 11.9%-ով կամ 24893.1 հազար դրամով, իսկ 2010-ի նույն ժամանակահատվածի ցուցանիշը՝ 24.7%-ով կամ 46254.9 հազար դրամով: Ընդ որում, բոլոր հարկատեսակների և

սոցապահովության վճարների մասով մեզ հաջողվել է կատարել պլանային առաջադրանքները: Էական աճ ենք արձանագրել բնապահապանական և բնօգտագործման վճարների, ավտոմոբիլային ճանապարհների շինարարության, նորոգման և պահպանման համար կատարվող մասհանումների,



շահութահարկի, ավելացված արժեքի հարկի մասով:

- Շրջանի հարկատուները հիմնականում ո՞ր ոլորտներն են ներկայացնում:

-Շրջանում 512 հարկ վճարող է հաշվառված, որոնցից փաստացի 258-ն են գործում: Տեսչության կողմից սպասարկվող հարկ վճարողների գերակշիռ մասը՝ 51%-ը, ներկայացնում է առևտրի ոլորտը, 16%-ն ընդգրկված է սպասարկման ոլորտում, ապրանքների արտադրության ոլորտում՝ 6%-ը, շինարարության ոլորտում էլ՝ 3%-ը:

-Հաղորդի հարկային տեսչությունը աչքի է ընկնում արդյունավետ գործունեությամբ: Ինչո՞վ եք դա պայմանավորում:

Առաջին հերթին կանխարգելիչ միջոցառումներ է պետք իրականացնել: Այդ նպատակով զգալիորեն ակտիվացրել ենք իրազեկման աշխատանքները:

-Այստեղ աշխատելու առաջին իսկ օրվանից շեշտադրում եմ բարոյահոգեբանական մթնոլորտի ձևավորումը: Դա է հիմքերի հիմքը: Աշխատանքային փորձն ինձ հետևյալ համոզմանն է բերել՝ եթե տեսչությունը միասնական չաշխատի,

երկարատև ժամանակահատվածում հաջողություններ չի կարող արձանագրել: Վստահորեն կարող եմ ասել, որ այս գաղափարն ինձ հաջողվել է ամրապնդել տեսչությունում: Այստեղի յուրաքանչյուր աշխատակից անհատական պատասխանատվություն է զգում ընդհանուր գործառնությունների նկատմամբ:

- Հաղորդի հարկատուն ինչպիսի՞ն է:

-Շրջանի հարկատուները կարգապահ ու պարտաճանաչ են: Եթե հարկային օրենսդրությունում ինչ-որ բան է փոփոխվում, ապա պարտադիր գալիս են, որպեսզի ավելի մանրամասն ծանոթանան փոփոխություններին՝ հետագայում սխալներ թույլ չտալու:

Նպատակով: Մեր հարկատուները պարտաճանաչ են նաև հարկերի վճարման առումով: Շրջանում պարտավորություններ կուտակած հարկ վճարողների թիվը շատ փոքր է: Միակ բացթողումը հաշվապահ մասնագետների պակասն է, ինչի հետևանքով հարկ վճարողը հաճախ սխալներ է թույլ տալիս:

-Գործնական աշխատանքն ի՞նչ է ցույց տալիս, շրջանում ավելի արդյունավետ է կանխարգելիչ գործողությունների կիրառումը, թե՞ արդեն իսկ կատարված խախտումների ֆիքսումը:

-Կարծում եմ, առաջին հերթին կանխարգելիչ միջոցառումներ է պետք իրականացնել: Այդ նպատակով զգալիորեն ակտիվացրել ենք իրազեկման աշխատանքները: Յուրաքանչյուր հարկատուի նկատմամբ



«ԽԱՆՏՈՒՄ ԹՈՒՅԼ ՏՎԱԾ ՀԱՐԿԱՏՈՒՆ ՊԵՏԵ Է ՎՍՏԱՅ ԼԻՆԻ՝ ՀԱՐԿԱՅԻՆԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՉԵՆ ՈՒՇԱՆԱ»,-

հիշեցնում է Հաղորդի շրջանի հարկային տեսչության պետ Մերուժան Բալայանը:



Հաղորդի հարկային տեսչությունը գործում է ԼՂՀ հարկային մարմնի ստեղծման առաջին իսկ օրվանից: Այսօր այն 10 աշխատակից ունի: Տեսչության կառուցվածքում ընդգրկված բաժինները երկուսն են, որոնք զբաղվում են սպասարկմամբ, տվյալների մշակմամբ, հաշվառմամբ և իրականացնում են վերահսկողական և գանձումների գործառնություններ:

մոտեցումն անհատական է: Այդպես նաև բացատրական աշխատանքներն են արդյունք տալիս: Ծառայության պետի հրամանով հաստատված համապատասխան ծրագրով՝ եռամսյակային պարբերականությամբ նաև վերադաս հարկային մարմնի մասնագետներն են ուսուցողական սեմինարներ կազմակերպում շրջանի հարկ վճարողների համար:

Ինչ վերաբերում է խախտումներ ֆիքսեղուն, ապա այդ մեթոդը ևս արդյունավետ է: Խախտում թույլ տված հարկատուն պետք է վստահ լինի, որ հարկային մարմնի գործողությունները չեն ուշանում: Այդ դեպքում նույն խախտումը կրկնելու հավանականությունը նվազագույնի է հասնում, ընդ որում, ոչ միայն այդ հարկատուի, այլ նաև մյուսների մոտ:

ԼՂՀ ԿԱ հարկային պետական ծառայության
պետի տեղակալ Արթուր Հարությունյան.

«ԱՊԱՅՈՎԵԼՈՎ ՓԱՍՏԱԹՐԱՎՈՐՄԱՆ
ՊԱՅԱՆՋՆԵՐԸ՝ ՆՎԱԶԱԳՈՒՅՆԻ ԵՆ ՀԱՍՑՎՈՐՄ
ՍՏՎԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՈՒՍԿԵՐԸ»





-Պարոն Հարությունյան, փաստաթղթավորման պահանջների պահանջմանն ուղղված մեծածավալ միջոցառումներ են իրականացվում: Նման քայլեր ձեռնարկելն այս փուլում հրատա՞պ էր դարձել:

-Խոսքը, նախևառաջ, տնտեսության մեջ ստվերային մասի կրճատմանն ուղղված քայլերի մասին է: Եթե չկա փաստաթղթավորում, ուրեմն գործ ունենք ռիսկերի հետ: Եվ, իհարկե, հակառակը. որքան ապահովված լինեն փաստաթղթավորման պահանջները, այնքան կնվազեն ստվերի հետ կապված ռիսկերը:

Ջոցառումների արդյունքում 2008-ին խախտման 344 դեպք էր արձանագրվել, 12 սուբյեկտների գործունեություն կասեցվել էր 5-ական օրով, 3-ինն էլ՝ 10-ական օրով:

Համատարած ստուգումներ կազմակերպվեցին նաև ձեռնարկատիրական գործունեության գրանցման ճշտության մասով: Էլ ավելի ակտիվացան ապրանքանյութական արժեքների ներմուծման գործընթացի նկատմամբ հսկողական աշխատանքները, որոնց արդյունքում 2008 թվականին միայն առևտրի գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտների կող-

որ այդ ուղղությամբ աշխատանքներ են տարվել նաև 2009-ին և 2010-ին: Միայն 2010-ի հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին համատարած ստուգումներ են իրականացվել Ստեփանակերտում գործող

Որքան ապահովված լինեն փաստաթղթավորման պահանջները, այնքան կնվազեն ստվերի հետ կապված ռիսկերը:

շուրջ 50 տնտեսվարող սուբյեկտների մոտ. գրեթե բոլորի մոտ էլ հայտնաբերվել են փաստաթղթավորման պահանջների չկատարման դեպքեր և, բնականաբար, համապատասխան պատժամիջոցներ են կիրառվել:

- Որպեսզի ստվերի դեմ պայքարն արդյունավետ լինի, նաև համապատասխան օրենսդրական լծակներ են անհրաժեշտ:

STOP ՍՏՎԵՐ.

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՄԲՈՂԶ ՇՂԹԱՆ՝ ՀԱՐԿԱՅԻՆԻ ԽՈՇՈՐԱՅՈՒՅՅԻ ՏԱԿ

-Իսկ ի՞նչ քայլեր են իրականացվել այս ուղղությամբ, որպեսզի փաստաթղթավորման ապահովումը բավարար մակարդակի բերվի:

-Տնտեսությունում փաստաթղթավորման պահանջների պահպանումը մեր գերակա խնդիրն է: Այս ուղղությամբ վերջին երեք տարվա ընթացքում լայնածավալ միջոցառումներ են իրականացվել: Հսկողությունը սկսել ենք առևտրի ոլորտից՝ առաջին հերթին՝ ՀԴՄ-ի կիրառման ու շահագործման կանոնների պահպանման նկատմամբ: Այս գործընթացը հարկային մարմինների ամենօրյա խիստ հսկողության ներքո է: Առաջին անգամ կիրառվեց նաև հսկիչ-դրամարկային մեքենաների շահագործման կանոնների խախտում թույլ տված տնտեսվարողների գործունեության կասեցման համակարգը: Նշված հսկողական մի-

Երբ հարկայինի համար տեսանելի է ամբողջ շղթան... Դա կատարյալ տարբերակ է, որին ձգտում են երկրի իշխանությունները և ոլորտի պատասխանատուները՝ հատուկ մարտավարություն մշակելով, օրենսդրությունը բարեփոխելով և կոնկրետ քայլեր կատարելով: Բոլոր միջոցառումների հիմքերի հիմքը փաստաթղթավորման ապահովումն է: Չլիսավոր նպատակը պարզ է՝ ստվերի կրճատում, ինչի արդյունքում ոչ միայն պետբյուջեի մուտքերը կավելանան, այլ նաև հավասար դաշտ կբերվեն բոլոր տնտեսվարողները:

մից ապրանքանյութական արժեքների ներմուծման ծավալը կազմել է 27մլրդ 326մլն դրամ՝ 13մլրդ 857մլն դրամի չափով կամ 97%-ով աճ արձանագրելով 2007-ի համեմատ:

-Պարոն Հարությունյան, փաստորեն փաստաթղթավորումը վերջին տարիներին օրակարգային խնդիր է:

-Այո, փաստաթղթավորման խնդիրն օրակարգային է այս տարիներին: Նշեմ,

-Միանշանակ: Փաստաթղթավորման ապահովման գործում կարևոր նշանակություն ունեցան օրենսդրական բարեփոխումները. 2009թ.-ի հուլիսի 1-ից փոփոխություն կատարվեց «Հարկերի մասին» օրենքում, որով նախատեսվեց տուգանք՝ գործարքի ամբողջ արժեքի 20 տոկոսի չափով՝ ինչպես հաշվարկային փաստաթուղթ չտրամադրող, այնպես էլ դրանք չպահանջող գործարքի կողմերի նկատմամբ:

Բարեխիղճ տնտեսվարողը ազատվում է պատասխանատվությունից, եթե հարկային մարմիններին հավաստի տեղեկություններ է ներկայացնում իրեն փաստաթուղթչտրամադրած մատակարարների վերաբերյալ: Միաժամանակ, բացառապես առևտրի ոլորտում գործող սուբյեկտներին, հնարավորություն է տրվել օրինականացնել ԼՂՀ տարածք ներմուծվող՝ առանց փաստաթղթերի հիմնավորման ձեռք բերված ապրանքները՝ ազատելով փաստաթղթերի ձեռքբերման հետ կապված քաշքուշկներից և ապահովելով իրատեսական հարկային պարտավորությունների հաշվարկման հնարավորություն:

Իսկ «ԼՂՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքով գործողության մեջ դրվեց չափագրումների անց կացման համակարգը, որը հնարավորություն է տալիս հարկային մարմիններին իրականացված խրոնոմետրաժի արդյունքներով անուղղակի եղանակներով հարկ վճարողի հարկային պարտավորությունների հաշվարկ կատարել:

-2009 թվականի հուլիսի 1-ից նաև կամերալ ուսումնասիրությունների համակարգն է գործարկվել: Ընդհանուր հսկողական ոլորտում այս համակարգի ներդրումն ի՞նչ կարող է փոխել:

-Կամերալ ուսումնասիրությունների համակարգի կիրառումը չափազանց կարևոր է: Այս տարի օրենսդրորեն ամրագրվեց նաև հարկ վճարողի վերաբերյալ երրորդ անձանցից տեղեկատվություն ստանալու հնարավորությունը: Ներկայումս այս ուղղությամբ մի շարք որոշումների նախագծեր ենք

նախապատրաստել, որոնց ընդունմամբ կընդլայնվի օգտագործվող տեղեկատվության շրջանակը: 2010-ին և այս տարվա առաջին կիսամյակի ընթացքում զգալի աշխատանքներ ենք տարել նաև համադրումների ավտոմատացման ուղղությամբ, ինչը հնարավորություն կտա կամերալ ուսումնասիրության ենթարկել ավելի մեծ թվով հարկ վճարողների հաշվարկ-հաշվետվություններ՝ միաժամանակ վերահսկելով ռիսկային հարկ վճարողներին:

Նշված վարչարարական և օրենսդրական միջոցառումներին զուգահեռ, հարկային մարմնի կողմից նաև բացատրական, քարոզչական աշխատանքներ են տարվում, այդ թվում՝ անհատական հանդիպումներ ենք կազմակերպում հարկ վճարողների հետ, ինչը ևս իրավախախտումները կանխելու նպատակ ունի:

Հսկողությունը սկսել ենք առևտրի ոլորտից՝ առաջին հերթին՝ ՀՀԱ-ի կիրառման ու շահագործման կանոնների պահպանման նկատմամբ:

2009թ.-ի հուլիսի 1-ից փոփոխություն կատարվեց «Հարկերի մասին» օրենքում, որով նախատեսվեց տուգանք՝ գործարքի ամբողջ արժեքի 20 տոկոսի չափով՝ ինչպես հաշվարկային փաստաթուղթ չտրամադրող, այնպես էլ դրանք չպահանջող գործարքի կողմերի նկատմամբ: Բարեխիղճ տնտեսվարողը ազատվում է պատասխանատվությունից, եթե հարկային մարմիններին հավաստի տեղեկություններ է ներկայացնում իրեն փաստաթուղթ չտրամադրած մատակարարների վերաբերյալ:

Չնայած ձեռնարկված միջոցառումների արդյունքում բարելավվել է ոլորտի փաստաթղթաշրջանառությունը, այնուամենայնիվ, այստեղ դեռ խնդիրներ ունենք: Հենց այդ նկատառումով էլ փաստաթղթավորման վերահս-

կողության գործընթացը շարունակում է մնալ հարկային պետական ծառայության առաջնահերթությունների թվում:

- Փաստաթղթավորման հետ կապված խնդիրներն ավելի հաճախ մեծածախ առևտրի ոլորտին են վերագրում:

-Ամեն ինչ պարզ է՝ եթե փաստաթղթավորման պահանջները չեն պահպանվում մեծածախ ոլորտում, այն բացասական հետևանքներ է ունենում հաշվառման ընդհանուր շղթայի մյուս հատվածներում: Հետևաբար մեր հսկողական աշխատանքներն առաջին հերթին ուղղված են մեծածախ ոլորտի փաստաթղթաշրջանառության կանոնակարգմանը: Դրան մեծապես նպաստում է նաև ԼՂՀ տարածք ներմուծվող ապրանքանյութական արժեքների հաշվառման նկատմամբ խիստ հսկողության սահմանումը. որքան վերահսկելի լինեն ծավալներն այս օղակում, այնքան նվազագույնի կհասցվի դրանք թաքցնելու հավանականությունը՝ հետագա՝ իրացման փուլում: 



ՏՎՅԱԼՆԵՐԻ

ԼՈՎԱԼ ՑԱՆՑԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ

ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ

ՀԱՄԱԿԱՐԳԻՋՆԵՐԻ

ՏՊԻՋՆԵՐ

ԴԻԱԳՆՈՍՏԻԿԱ

ՊԱՏՃԵՆԱՀԱՆՄԱՆ
ՍԱՐՔԵՐ

ՀԱՄԱԿԱՐԳԻՋՆԵՐ

ՑԱՆՑԱՅԻՆ

ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ

ՀԱՄԱԼՐՈՂ

ՍԱՐՔԵՐ

INNOVA

• • • • • ՄՆԱՅԱԾԸ XX-ԲԳ. ԴԱՐ

ՆՈՐՈՒԹՔՐՈՒՔՆԵՐ

ՕՊԵՐԱՑԻՈՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՏԵՂԱԴՐՈՒՄ

ԾՐԱԳՐԱՎՈՐՈՒՄ

ՀԱՄԱԿԱՐԳԻՋՆԵՐԻ ՆՈՐՈՒՄ

ԿԱՅՔԵՐԻ ԱՏԵՂԾՈՒՄ, ՏԵՂԱԴՐՈՒՄ

ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ 21,31



977-200, 977-100, 977-666

www.innova.nk.am

E-mail: info@innova.nk.am

100 ԽՈՇՈՐՆԵՐԸ ՎՃԱՐԵԼ ԵՆ ՀԱՐԿԵՐԻ, ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՊԱՐՏԱԴԻՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՅՈՎՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ 62.8 ՏՈԿՈՍԸ



2011թ.

առաջին կիսամյակի ընթացքում ԼՂՀ առաջին 100 խոշոր հարկ վճարողները պետբյուջե են փոխանցել 6559,2 մլն դրամ: Դա պետական բյուջեի հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների ընդհանուր մուտքերի 62.8%-ն է: Նախորդ տարի նույն ժամանակահատվածում այդ ցուցանիշը կազմել էր 5426.8 մլն դրամ, ինչը պետբյուջեի՝ հարկային ծառայության կողմից վերահսկվող ընդհանուր մուտքերի 57.5%-ն էր:



ԽՈՇՈՐՆԵՐԻ ԽՈՇՈՐԸ. ԱՐՑԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀՍԿԱ «ԲԵՅՉ ՄԵԹՃԼՍ»-Ը՝ ՄՇՏԱԿԱՆ ՏԵՂՈՒՄ

100 խոշորների ցանկը շարունակում է գլխավորել «Բեյչ ՄեթՃԼՍ»-ը: Թիվ մեկ հարկատուն այս տարվա առաջին կիսամյակում էլ վստահորեն պահպանում է պատվավոր տեղը: Այդ ժամանակահատվածում ևս ամենաշատը այս ընկերությունն է պետքույն գումար փոխանցել՝ շուրջ 2 մլրդ դրամ (2082.4 մլն դրամ): Ավելին, հարկատուների առաջատարն ամենևին մտադիր չէ սահմանափակվել եղածով՝ այս անգամ էլ ավելացնելով հարկային մուտքերը. նախորդ տարի նույն ժամանակահատվածում վճարումները շուրջ 1734 մլն դրամ էին կազմել:

Ինչ վերաբերում է առաջին եռյակին, ապա «Բեյչ ՄեթՃԼՍ»-ին հաջորդում է «Ղարաբաղ Տելեկոմ»-ը: Նախորդ տարի առաջին եռյակում ընդգրկված «Արցախգազ» ՓԲԸ-ն այս տարվա առաջին կիսամյակում իր տեղը զիջել է «Արցախէներգո» ՓԲԸ-ին: Երեք խոշորներն այս տարվա առաջին կիսամյակում ԼՂՀ պետքույն են փոխանցել 3346.6 մլն դրամի հարկեր, տուրքեր և պարտադիր վճարներ (այդ թվում՝ պարտադիր սոցիալական ապահովության վճարներ), այսինքն՝ մուտքերի 32.1%-ն ապահովել են այս երեք ընկերությունները: Այս առումով ևս աճ կա. նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ խոշորների եռյակն ավելացրել է վճարումները: Հիշեցնենք, որ 2010-ի առաջին կիսամյակի արդյունքներով նրանց կողմից կատարված վճարումները կազմել էին 2766.6 մլն դրամ կամ պետքույնի հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների 29.3%-ը:

Ընդհանուր առմամբ, ըստ 100 խոշոր հարկ վճարողների կողմից հայտարարագրված՝ պետական բյուջե հաշվարկված և վճարված հարկերի, տուրքերի և

այլ պարտադիր վճարների (այդ թվում՝ պարտադիր սոցիալական ապահովության վճարների) ցուցանիշի մեծության՝ նկատվել է աճի միտում: Հաշվարկված հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների ցուցանիշը 2010թ. առաջին կիսամյակում կազմել էր 5791.6 մլն դրամ, իսկ 2011-ի նույն ժամանակահատվածում՝ 6803.6 մլն դրամ: Իսկ վճարված հարկերի, տուրքերի և այլ պարտա-



100 խոշորների ցանկը շարունակում է գլխավորել «Բեյչ ՄեթՃԼՍ»-ը: Թիվ մեկ հարկատուն այս տարվա առաջին կիսամյակում էլ վստահորեն պահպանում է պատվավոր տեղը: Այդ ժամանակահատվածում ևս ամենաշատը այս ընկերությունն է պետքույն գումար փոխանցել՝ շուրջ 2 մլրդ դրամ (2082.4 մլն դրամ): Ավելին, հարկատուների առաջատարն ամենևին մտադիր չէ սահմանափակվել եղածով՝ այս անգամ էլ ավելացնելով հարկային մուտքերը. նախորդ տարի նույն ժամանակահատվածում վճարումները շուրջ 1734 մլն դրամ էին կազմել:

դիր վճարների ցուցանիշն այս տարվա առաջին կիսամյակում՝ 2010թ. նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 1132.4 մլն դրամով կամ 20.9%-ով՝ կազմելով 6559.2 մլն դրամ:

100 խոշոր հարկատուների տարեկան վճարած հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների (այդ թվում՝ պարտադիր սոցիալական ապահովության վճարների) տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ 2010թ. և 2011թ. առաջին կի-

սամյակում ունեցել է հետևյալ պատկերը. 2010թ.՝ 57.5%, այս տարի՝ 62.8%:

ՄԻՋԻՆ ԱՇԽԱՏԱԿԱՐՁԸ 115.7 ՀԱՉԱՐ ԴՐԱՄ Է

100 խոշոր հարկ վճարողների կողմից հայտարարագրված աշխատողների միջին ամսական ցուցակային թվի և աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցների ցուցանիշների մասով այս տարվա առաջին կիսամյակի ընթացքում ևս

նկատվել է աճի միտում՝ նախորդ տարվա համեմատ: Աշխատողների միջին ամսական ցուցակային թիվը 2010թ. կազմել էր 8686 մարդ, 2011թ.-ին՝ 8762 մարդ, իսկ աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցների ամսական ցուցանիշը 2010 և 2011թթ. առաջին կիսամյակների կտրվածքով համապատասխանաբար կազմել է 910.3 մլն և 1013.5 մլն դրամ: Միջին ամսական աշխատավարձը 2010թ. առաջին կիսամյակում կազմել էր 104.8 հազար դրամ, իսկ այս տարի՝ 115.7 հազար դրամ: Առաջին 3 խոշոր հարկ վճարողների մասով աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցների ցուցանիշը 2011թ. առաջին կիսամյակում 2010թ. նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 60.8 մլն դրամով՝ կազմելով 443.4 մլն դրամ:

ԽՈՇՈՐ ՀԱՐԿԱՏՈՒՆԵՐԸ՝ ԸՍՏ ԻՐԵՆՑ ԻՐԱՑՄԱՆ ԾԱՎԱԼԻ

2011թ. առաջին կիսամյակում ըստ ծավալի 100 խոշոր հարկ

վճարողների ցուցանիշների պատկերը հետևյալն է. եթե հարկ վճարողների կողմից հայտարարագրված իրացման ծավալի ցուցանիշը (առանց ԱԱՀ-ի) անցած տարվա առաջին կիսամյակում շուրջ 44892.9 մլն դրամ էր, ապա 2011թ. նույն ժամանակահատվածում այն կազմել է 52921.7 մլն դրամ: Իսկ դա նշանակում է, որ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ իրացման ծավալի աճ է արձանագրվել 8028.8 մլն դրամով կամ 17.9%-ով: ☐

ԱՌԱՋԻՆ 100 ԽՈՇՈՐ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՎՃԱՐՎԱԾ ՀԱՐԿԵՐԻ ԵՎ ՏՈՒՐՔԵՐԻ ՄԵԾՈՒՅՑՈՒՆՆԵՐԸ

Զ/Զ	ՀՎՀՀ	Հարկ վճարողի անվանումը	Հարկ վճարողի գտնվելու վայրը	2011թ. հունվար-հունիս ամիսներին հարկ վճարողի կողմից ԼՂՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարը /հազ.դրամ/				
				այդ թվում				
				Ընդամենը	ուղղակի հարկեր (այդ թվում՝ շահութահարկ, եկամտահարկ)	անուղղակի հարկեր (այդ թվում՝ ԱԱՀ, ակցիզային հարկ)	հաստատագրված վճարներ	այլ հարկեր, տուրքեր և պարտադիր վճարներ
1.	90016169	«Բեյզ Մեթըլս» ՓԲԸ	գ. Դրմբոն	1869359.0	559000.0	821000.0		489359.0
2.	90015278	«Ղարաբաղ Տեկնոմ» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	700286.0	127340.5	547834.0		25111.5
3.	90010189	«Արցախսպազ» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	409088.1	8978.2	381806.4		18303.5
4.	90000186	«Արցախեներգո» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	338088.2	27545.5	283130.8		27411.9
5.	90001386	«Արցախբանկ» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	157575.2	143505.0	691.5.0		13378.7
6.	90022272	«Ստեփանակերտի կոնյակի գործարան» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	129003.4	9071.7	115132.5		4799.2
7.	90071281	«Դրոմսիկ» ՍՊԸ	գ. Այգեստան	89625.0	9000.0	70000.0		10625.0
8.	90002165	«Վիրաժ» ԱԿ	ք. Ստեփանակերտ	85331.7	27879.4	54243.5		3208.8
9.	90012365	«Զարավան» ՍՊԸ	գ. Բերքաձոր	77891.1	12055.6	61234.9		4600.6
10.	90017188	«Պանտ» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	77339.3	13692.5	61181.1		2465.7
11.	90025315	«Արցախ ՀԷԿ» ԲԲԸ	ք. Ստեփանակերտ	68704.6	60036.0	1233.3		7435.3
12.	90013144	«Պետրոլ սերվիս» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	57893.6	2925.5	8678.6	40729.4	5560.1
13.	90070057	«Արցախ բրենդի կոմպանի» ՓԲԸ	ք. Ասկերան	57315.8	4184.7	49251.9	135.1	3744.1
14.	90024957	«Շին-Վեր պլյուս» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	38353.7	4673.1	32087.9		1592.7
15.	90003056	«Մեչտա» ԱԿ	ք. Ստեփանակերտ	36693.0	3200.0	26676.2	281.6	6535.2
16.	90213015	«Ավանգարդ» ՍՊԸ	ք. Մարտունի	35744.0	3693.1	149.6	2616.6	29284.7
17.	90026446	«Գլոբալշին» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	35696.8	6059.6	28395.2		1242.0
18.	90213737	«Պրոմագրոսերվիս» ՓԲԸ	ք. Մարտունի	33443.9	1098.2	31786.1		559.6
19.	90016787	«Սիգմա գրուպ սերվիս» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	32287.9	2590.7	28690.1		1007.1
20.	90013565	«Աշոց» ՍՊԸ	ք. Ասկերան	31254.2	6125.1	24148.4		980.7
21.	90025307	«Սուր Նարեկ» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	31035.9	5172.6	24806.6		1056.7
22.	90022317	«Գրանդ կոմերց» ՍՊԸ Արցախի մասնաճյուղ	ք. Ստեփանակերտ	29811.1	1430.7	23112.1		28380.4
23.	90026928	«Տեխնոնտաժ» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	28185.9	4609.1	26642.2		464.7
24.	90000324	ԼՂՀ Ոստիկանության պետական պահպանության վարչություն	ք. Ստեփանակերտ	27559.6	363.0	21023.9		554.4
25.	90000143	«Արդյունաբերական շինարարական կոմբինատ թիվ 1» ԲԲԸ	գ. Բերքաձոր	25372.8	3152.5	21289.0		1196.4
26.	90008901	ԼՂՀ «Հանրային հեռուստառադիոնկերություն» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	25272.6	3512.0	20039.3		471.6
27.	90027079	«Պրիմա գրուպ» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	24288.4	156.5	16180.0	238.6	23893.3
28.	90003237	«Բերդ» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	23813.6	3209.6	462.0		564.7
29.	90027001	«Արցախուդի» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	22907.0	5957.0			770.0
30.	90012812	«Ստեփանակերտ Սերվիս» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	22362.0	7450.0	11802.3	10000.0	4450.0
31.	90001705	«Օկեան» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	22100.9	719.9	6117.7		21381.0
32.	90025813	«Տեխնոշին» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	21179.4	6456.3			2920.8
33.	90281903	«Պարզև» ՍՊԸ	ք. Հադրութ	20877.7	1220.6	15000.0		13539.4
34.	90018172	«Կապիտալ» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	20830.3	547.8	16514.5		20282.5
35.	90025659	«Ատրիում» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	20472.3	4062.4	2665.1		1409.9
36.	90027209	«Ադրիանա» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	20422.0	3189.0	9235.6		718.5
37.	90026025	«Երեւնուկ» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	19757.0	1025.1			16066.8
38.	90282605	«Հաբանդ» ՍՊԸ	գ. Տոդ	19373.8	9310.6	822.1		827.6
39.	90013333	«Արցախերկսեմետ» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	19358.0	17736.8	10901.5		1621.2
40.	90024733	«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ Ստեփանակերտի մասնաճյուղ	ք. Ստեփանակերտ	19088.4	13807.2			4459.1
41.	90019907	«Արտադրական կոմբինատ - 3» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	16789.8	4084.4			1803.9
42.	90012176	«Վարարակն» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	16442.8	2962.4	12864.5		615.9
43.	90012064	«Բարի Հոգի» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	16238.3	805.6			15432.7
44.	90003099	«SBS» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	16043.1	974.2			15068.9
45.	90023765	«Սեար գրուպ» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	15441.0	583.1	1897.3		12960.6
46.	90022299	«Հրայր» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	15250.0				15250.0
47.	90414369	Բաղդասարյան Արմեն ա/ձ	ք. Ստեփանակերտ	15231.2	403.3			14827.9
48.	90003072	«Նվեր» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	15168.3	3804.1	9429.1	1008.0	927.1
49.	90282664	«Արարատշինտրանս» ՍՊԸ	գ. Այգեստան	14704.3	2003.2	11932.8		768.3
50.	90010207	«Զի Էֆ» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	14185.0	3209.4	10701.7		273.9



ԱՌԱՋԻՆ 100 ԽՈՇՈՐ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՅ ԿՈՂՄԻՅ ՎՃԱՐՎԱԾ ՀԱՐԿԵՐԻ ԵՎ ՏՈՒՐՔԵՐԻ ՄԵԾՈՒՅՈՒՆՆԵՐԸ

Գ/Գ	ՀՎՀՀ	Հարկ վճարողի անվանումը	Հարկ վճարողի գտնվելու վայրը	2011թ. հունվար-հունիս ամիսներին հարկ վճարողի կողմից ԼՂՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարը /հազ.դրամ/				
				այդ թվում				
				Ընդամենը	ուղղակի հարկեր (այդ թվում՝ շահութահարկ, եկամտահարկ)	անուղղակի հարկեր (այդ թվում՝ ԱԱՀ, ակցիզային հարկ)	հաստատագրված վճարներ	այլ հարկեր, տուրքեր և պարտադիր վճարներ
51.	90012099	«Ֆարմսերվիս» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	14112.5	2727.7	9982.1		1402.7
52.	90212588	«Լուսակերտ» ՍՊԸ	ք. Մարտունի	13993.6	1366.6	12043.4		583.6
53.	90003442	«Կապավոր» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	13838.0	3672.4	8988.3		1177.3
54.	90026704	«Վերանորոգման, շինարարության տնտեսություն» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	13525.2	5271.9	7570.5		682.8
55.	90070701	«Վրեժ» ՓԲԸ	գ. Այգեստան	13264.8		13264.8		
56.	90019228	«Օմեգա գրուպ» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	12765.4	170.4	3300.7	9049.5	244.8
57.	90014541	«Դիզակ պլյուս» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	12763.2	2905.2	9459.6		398.4
58.	90018886	«Գևատ» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	12629.6	173.0			12456.6
59.	90070118	«Վահագն-84» ԱԿ	ք. Ասկերան	12587.8	449.3	11678.3	116.5	343.7
60.	90070246	«Սևան» ՍՊԸ	գ. Իվանյան	12443.4	959.7	7639.0	2477.0	1367.7
61.	90001138	«Մեխտրոնսպորտ» ԱԿ	ք. Ստեփանակերտ	12040.5	2640.0	8902.4		498.1
62.	90005352	«Էներգո» ԱԿ	ք. Ստեփանակերտ	11674.0	1312.3	10236.7		125.0
63.	90016323	«Բլարգ» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	11255.3	2048.3	8942.0		265.0
64.	90006038	«Ջրային տնտեսություն» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	11162.9	1623.0	9134.0		405.9
65.	90029873	«Միկմետայ» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	11051.5	401.4	1642.9		9007.2
66.	90016177	«Հայստանի բիզնեսի հիմնադրամ» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	10808.0	10508.0			300.0
67.	90009361	«Արցախճան» ինստիտուտ» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	10556.1	1921.2	7602.4		1032.5
68.	90002698	«Արցախկապ» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	10435.3	2864.0	5858.3		1713.0
69.	90014336	«Պրոգրես» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	10328.5	4188.6	5783.2		356.7
70.	90015123	Ավ. Թախթաշյանի անվ. «Բուսաբանական այգի» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	10241.7	1633.6	8363.3		244.8
71.	90018654	«Ֆեշ-պլյուս» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	10180.2	1112.3	133.3	5731.6	3203.0
72.	90073649	«Միլան Էլ. Ջի.» ՍՊԸ	գ. Նորագյուղ	10146.5	205.3	2973.5		6967.7
73.	90001559	«Նորայր Էլ. Հրայր եղբայրներ» ԱԿ	ք. Ստեփանակերտ	9815.5	875.5			8940.0
74.	90012322	«Բնակարանային շահագործման տնտեսություն» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	9661.4	2791.6	6602.5		267.3
75.	90029599	«Կարմիր Նուռ» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	9603.1	2734.3	6697.4		171.4
76.	90017249	«Ալյուս գրուպ» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	9554.1	2587.3	4529.4	2188.8	248.6
77.	90010282	«Արցախկաթ» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	9529.0	2948.1	5479.6		1101.3
78.	90004179	«Արմինկո-ՆԿ» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	9308.5	1933.0	6821.8		553.7
79.	90018697	«Արցախ կարի-կոշիկի արտ. միավ.» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	9188.4	6129.0			3059.4
80.	90021261	«Արաքս Գրուպ» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	9177.7	7288.9			1888.8
81.	90001833	«Արցախփոստ» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	9035.5	2837.4	5085.8		1112.3
82.	90019476	«Տեխնադեմոստր» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	8879.0	1781.2	6166.2		931.6
83.	90213194	«Ռաֆո» ՍՊԸ	գ. Թաղավարդ	8661.1	2499.5	5662.3		499.3
84.	90020535	«Աշոտ Երկաթ» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	8560.1	3397.8	3000.0	628.9	1533.4
85.	90000298	«Ջերմային տնտեսություն» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	8550.2	972.2	6614.2		963.8
86.	90003477	«Վերածնունդ» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	8497.4	896.5	6275.4		1325.5
87.	90025049	«Էռմի» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	8493.4	2152.4	4789.8		1551.2
88.	90024709	«Նորոգչին» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	8409.7	1218.9	6918.9		271.9
89.	90073588	«Դորկապ» ՓԲԸ	ք. Ասկերան	8181.6	3004.3	4153.1		1024.2
90.	90013943	«Սատուն» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	8167.2	1733.5	6287.0		146.7
91.	90016752	«Ճանշին» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	8114.1	2889.4	3670.0		1554.7
92.	90023773	«Օսրամ լայթինգ» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	8084.6	3430.3			4654.3
93.	90025297	«Արեգակ» ունիվերսալ վարկային կազմակերպություն Ստեփ. մասնաճյուղ	ք. Ստեփանակերտ	7998.4	1098.4	6500.0		400.0
94.	90029452	«Էլ-ի-ջի» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	7949.9	2021.9			5928.0
95.	90024038	«Հիզ զազ» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	7867.5	83.3	30.0		7754.2
96.	90341889	ԼՂՀ ԶՆ «Վահե Կարապետյան ճանաչագործում» ՓԲԸ	ք. Շուշի	7729.2	1905.6	5720.0		103.6
97.	90028907	«Տեխ Շին Ինժեներինգ» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	7721.0	2953.5	4532.8		234.7
98.	90002836	«Էլեկտրոմոնտաժ» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	7700.0	1000.0	6700.0		
99.	90002519	«Միրաժ» ԱԿ	ք. Ստեփանակերտ	7692.2	1233.2	1964.2		4494.8
100.	90004677	«Սիփան» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	7665.8	668.3	6828.6		168.9

Յմլն դրամ և ավելի պարտադիր սոցիալական ապահովության վճար վճարած ապահովագրությունները (առևտրային կազմակերպությունները) և
կրանց կողմից ֆինանսական տարվա սկզբից վճարված պարտադիր սոցիալական ապահովության վճարների մեծությունները

NN ը/կ	ՀՎՀՀ	Ապահովագրի անվանումը	Ապահովագրի գտնվելու վայրը	2011թ. հունվար-հունիս ամիսներին վճարված սոցիալական ապահովության վճարների ընդհանուր գումարը (հազ.դրամ)
1	2	3	4	5
1.	90016169	«Բեյզ Մեթըլս» ՓԲԸ	գ. Դրմբոն	200000.0
2.	90015278	«Ղարաբաղ Տեկնոմ» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	113481.7
3.	90000186	«Արցախէներգո» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	97007.5
4.	90001386	«Արցախբանկ» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	64810.9
5.	90071281	«Դորոժնիկ» ՍՊԸ	գ. Այգեստան	31000.0
6.	90010189	«Արցախգազ» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	25924.7
7.	90017188	«Պանտ» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	21452.5
8.	90002165	«Վիրաժ» ԱԿ	ք. Ստեփանակերտ	18023.6
9.	90025315	«Արցախ ՋԷԿ» ԲԲԸ	ք. Ստեփանակերտ	17887.2
10.	90021261	«Արաքս Գրուպ» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	15400.4
11.	90008771	ԼՂՀ ԱՆ «Հանրապետական հիվանդանոց» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	15332.6
12.	90025813	«Տեխնոշին» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	15202.3
13.	90028907	«Տեխ Շին Ինժինեռինգ» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	14073.6
14.	90141847	ԼՂՀ ԱՆ «Ռ.Հ.Բազիլյանի անվ. Մարտակ. շրջ. բուժմիավորում» ՓԲԸ	ք. Մարտակերտ	13415.4
15.	90008901	ԼՂՀ «Հանրային հեռուստառադիոընկերություն» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	13036.0
16.	90022272	«Ստեփանակերտի կոնյակի գործարան» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	12794.8
17.	90003442	«Կապավոր» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	12547.3
18.	90018697	«Արցախ կարի-կոշիկի արտ. միավ.» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	11997.0
19.	90070057	«Արցախ բրենդի կոմպանի» ՓԲԸ	ք. Ասկերան	11970.8
20.	90008979	ԼՂՀ ԱՆ «Արեւիկ» մանկական բուժմիավորում» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	11819.2
21.	90211894	ԼՂՀ ԱՆ «Մարտունու շրջանային բուժմիավորում» ՓԲԸ	ք. Մարտունի	11619.9
22.	90008763	ԼՂՀ ԱՆ «Մոր եւ մանկան առողջության պահպանման կենտրոն» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	11603.6
23.	90016787	«Սիգմա գրուպ սերվիս» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	11573.6
24.	90028063	«Տեխնո Ֆիտ Շին» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	11387.0
25.	90027001	«Արցախուդի» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	11360.0
26.	90028854	«Զրամատակարարում և ջրահեռացում» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	10311.9
27.	90009329	ԼՂՀ ԱՆ «Արմինե Փակումեանի անվան պոլիկլինիկա» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	10142.4
28.	90026704	«Վերանորոգման, շինարարության տնտեսություն» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	10002.3
29.	90001833	«Արցախփոստ» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	9992.1
30.	90002698	«Արցախկապ» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	9801.5
31.	90025049	«Էռմի» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	9377.3
32.	90012812	«Ստեփանակերտ սերվիս» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	8700.0
33.	90017249	«Այլուս գրուպ» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	8015.8
34.	90003863	«Մեսրոպ Մաշտոց Համալսարան» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	7031.0
35.	90212588	«Լուսակերտ» ՍՊԸ	ք. Մարտունի	6838.0
36.	90029918	«ՖԴ-Սոֆիա» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	6694.7
37.	90013144	«Պետրոլ սերվիս» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	6670.9
38.	90281413	ԼՂՀ ԱՆ «Հաղորդի շրջանային բուժմիավորում» ՓԲԸ	ք. Հաղորդ	6389.4
39.	90028183	«Հորիզոն թրեյդ» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	6320.4
40.	90016752	«Ծանշին» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	6186.3
41.	90010282	«Արցախկաթ» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	6157.9



**3մլն դրամ և ավելի պարտադիր սոցիալական ապահովության վճար վճարած ապահովադիրները (առևտրային կազմակերպությունները) և
կրթական կոդի ֆինանսական տարվա սկզբից վճարված պարտադիր սոցիալական ապահովության վճարների մեծությունները**

NN ը/կ	ՀՎՀՀ	Ապահովադիր անվանումը	Ապահովադիր գտնվելու վայրը	2011թ. հունվար-հունիս ամիսներին վճարված սոցիալական ապահովության վճարների ընդհանուր գումարը (հազ.դրամ)
1	2	3	4	5
42.	90029969	«Ստեփանակերտի օդանավակայն» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	6146.9
43.	90029452	«Էյ-ի-ջի» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	5949.7
44.	90012365	«Զարավան» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	5921.0
45.	90028409	«Մեքենատրակտորային կայան» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	5647.3
46.	90000143	«Արդյունաբերական շինարարական կոմբինատ թիվ 1» ԲԲԸ	գ.Բերքաձոր	5552.6
47.	90003056	«Մեչտա» ԱԿ	ք.Ստեփանակերտ	5480.0
48.	90025659	«Ատրիում» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	5455.2
49.	90020879	«Փերֆեքթ Սետթինգ» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	5349.6
50.	90022317	«Գրանդ կոմերց» ՍՊԸ Արցախի մասնաճյուղ	ք.Ստեփանակերտ	5314.8
51.	90003261	«Խաչեն» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	5163.7
52.	90005051	«Գրիգոր Նարեկացի» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	5004.6
53.	90025262	«Արցախֆրու» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	4996.4
54.	90006038	«Զրային տնտեսություն» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	4865.0
55.	90020535	«Աշոտ Երկաթ» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	4782.7
56.	90025323	«Ազատ Արցախ» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	4570.0
57.	90003237	«Բերդ» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	4544.4
58.	90015123	Ավ.Թախթաջյանի անվ. «Բուսաբանական այգի» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	4503.0
59.	90008832	ԼՂՀ ԱՆ «Հոգեբուժաբանական դիսպանսեր» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	4500.2
60.	90025118	«Ստրոյ Սիտի» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	4437.2
61.	90009361	«Արցախճան» ինստիտուտ» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	4278.9
62.	90025307	«Սուր Նարեկ» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	4270.1
63.	90282664	«Արարատշինտրանս» ՍՊԸ	գ. Այգեստան	4237.6
64.	90002836	«Էլեկտրոմոնտաժ» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	4000.0
65.	90023576	«Ֆոր դիրեկշն» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	4000.0
66.	90005027	«Զրմուղ-Կայուղի» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	4000.0
67.	90018095	«Արդշինինվեստբանկ» ՓԲԸ Ստեփանակերտի մասնաճյուղ	ք.Ստեփանակերտ	3913.3
68.	90019907	«Արտադրական կոմբինատ - 3» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	3818.0
69.	90026928	«Տեխմոնտաժ» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	3699.5
70.	90009302	«Ստեփանակերտի շտապ բժշկական օգնության կայան» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	3691.1
71.	90013187	«Ծանշինվերանորոգում» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	3500.0
72.	90013565	«Աշոց» ՍՊԸ	ք.Ասկերան	3494.6
73.	90008952	ԼՂՀ ԱՆ «Հակապալարախտային դիսպանսեր» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	3458.1
74.	90026249	«Տոհմային կայան» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	3434.8
75.	90018654	«Ֆլեշ-պլուս» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	3425.3
76.	90025297	«Արեգակ» ունիվերսալ վարկային կազմակերպություն Ստեփ. մասնաճյուղ	ք.Ստեփանակերտ	3410.0
77.	90282605	«Հաբանդ» ՍՊԸ	գ.Տոլ	3329.6
78.	90026446	«Գլոբալիզմ» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	3322.7
79.	90000298	«Զերմային տնտեսություն» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	3312.4
80.	90015235	«Արցախբանկ» ՓԲԸ «Հաղթանակ» մասնաճյուղ	ք.Ստեփանակերտ	3164.9
81.	90001559	«Նորայր Եւ Հրայր եղբայրներ» ԱԿ	ք.Ստեփանակերտ	3143.7
82.	90012322	Ստեփ. քաղաք. «Բնակարանային շահագործման տնտեսություն» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	3130.0
83.	90015243	«Արցախբանկ» ՓԲԸ «Վերածնունդ» մասնաճյուղ	ք.Ստեփանակերտ	3014.3



BARCAMP. այլ կերպ ասած՝ միջոցառումներ կազմակերպելու բոլորովին նոր ձևաչափ, երբ նախապես համացանցին և SS ոլորտին վերաբերող շնորհանդեսներ չեն ծրագրվում, չեն հրավիրվում նաև հատուկ բանախոսներ, իսկ գեկուցումներ են անում և քննարկումներ ծավալում հենց մասնակիցները: Արցախում BARCAMP սպասվում է սեպտեմբերին՝ ԼՂՀ հռչակման 20-ամյակին: Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի մասնագետները կհիշեն՝ առաջին անգամ Արցախում BARCAMP տեղի է ունեցել մեկ տարի առաջ: BARCAMP Artsakh 2010-ին շուրջ 60 երիտասարդ էր մասնակցել: Սա այն միջոցառումներից է, որը կազմակերպում է Արցախի տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման կենտրոնը՝ երկրում բլոգերների, սոցիալական կայքերի և նոր մեդիայի ոլորտները զարգացնելու և կայացնելու նպատակով: Միջոցառում կազմակերպելու այս ձևաչափն, ի դեպ, առաջին անգամ կիրառվել է 2005-ին ՎՄՆ-ում՝ Silicon Valley-ում, ինչից հետո դա լայն տարածում է գտել ամբողջ աշխարհում: Մեր Արցախն աշխարհի հետ կապելու, զարգացած երկրների հետ համընթաց քայլելու նպատակով է ստեղծվել տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման՝ արդեն մեկ տարեկան կենտրոնը:

Արցախում տաղանդավոր երեխաները շատ են, բայց նրանց հետ պետք է համապատասխան համակարգված աշխատանքներ տարվեն, այլապես այդ ներուժը կկորցնենք:

-Պարոն Գրիգորյան, արցախյան տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը դեռևս կայացման փուլում է, և այդ գործում էական դերակատարում ունի Ձեր ղեկավարած կառույցը: Գործունեության մեկ տարվա ընթացքում որո՞նք են եղել կենտրոնի առաջնահերթությունները:

րարական գաղափարներ ենք առաջարկում: Փորձում ենք պոտենցիալ շահառուներին ընդգրկել տարաբնույթ միջոցառումներին՝ ոչ ֆորմալ կրթության ձևաչափով՝ կազմակերպելով հանդիպումներ, քննարկումներ, կարճաժամկետ ուսուցողական ծրագրեր:

Կենտրոնի գործունեության գլխավոր նպատակներից է նաև Արցախում տեղեկատվական տեխնոլոգիաների հետագա զարգացումն ու համապատասխան միջավայրի ստեղծումը: Մեր կենտրոնն այն օղակն է, որը կապում է ոլորտով հետաքրքրվող անձանց. նրանք հանդիպում, փոխադարձ հետաքրքրություններ կայացնող հարցեր են քննարկում, ծանոթություններ, կապեր հաստատում տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի մասնագետների հետ:

-Այս կարճ ժամանակահատվածում ի՞նչ արդյունք է հաջողվել արձանագրել:

-Այս մեկ տարվա ընթացքում աշխատանքը հիմնականում երիտասարդների հետ էր: Այդ ժամանակահատվածում մեզ հաջողվել է որոշակի շրջանակ ձևա-

ԱՐՑԱԽՅԱՆ IT ՏԻՐՈՒՅԹԻ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման կենտրոնը մեկ տարեկան է

-Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման կենտրոնի գործունեությունը ստեղծման իսկ օրվանից նախ կրթական և ուսումնական ծրագրերին է ուղղված: Այդ առումով նորա-

վերապատրաստումն անցկացնում են հիմնականում հայաստանյան մասնագետները, բայց առաջիկայում նրանց կմիանան նաև արտասահմանյան գործընկերները:



վորել՝ տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման կենտրոնում պարբերաբար աշխատող անձանց դարձնելով կազմակերպվող միջոցառումների և դասընթացների ակտիվ մասնակից: Պետք է նշեմ, որ նրանց մի մասն արդեն եկել է այն եզրահանգման, որ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում աշխատելը կարող է ոչ միայն հետաքրքիր, այլև նաև շահութաբեր լինել: Շատերն առաջին պատվերները ստացել են հենց մեր կենտրոնում և վարձատրվել դրա դիմաց:

Եական քայլեր ենք կատարել տեղեկատվական անվտանգության մակարդակի բարձրացման ուղղությամբ: Այս առու-

ու կենցաղի, առհասարակ՝ Արցախ աշխարհի մասին: Հիմնականում այդ նպատակով էլ գործարկվում է, օրինակ, artsakhtoday.com տեղեկատվական կայքը: Այդտեղ ոչ միայն թեմատիկ նյութերն են պարբերաբար թարմացվում, այլև անգամ տարբեր բնակավայրերի մասին տեղեկատվությունն է փոփոխվում:

- Այս պահին օրակարգում հրատապ ի՞նչ հարցեր են ընդգրկվել: Ո՞ր քայլերն են առաջնահերթ համարում:

-Այսօր ակտիվորեն աշխատում ենք նշված բոլոր ուղղություններով: Ամեն օր թարմացվում է կայքը: Շարունակական աշխատանքներ են տարվում ուսուցման բնագավառում: Նպատակ ունենք կենտրոնի գործունեությունն ընդլայնել դեպի շրջաններ. այդ ուղղությամբ արդեն իսկ կոնկրետ քայլեր ենք կատարել: Այդ նպատակով նաև արտագնա դասընթացներ են կազ-



SS զարգացման կենտրոնի տնօրեն Վլադիմիր Գրիգորյան.

«ՏԵԴԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԱՆ ԱՐԾԱԽՈՒՄ ԲԱՐՁՐԱՆՈՒՄ Է. ԱՌԱՋԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԱԿՆՉԱՅՏ ԵՆ»

մործում ենք սերտացնել շփումներն արտաքին աշխարհի հետ՝ ընդլայնելով աշխարհագրությունը: Հնարավորության դեպքում դրանք տեղափոխվում են գործնական հարթություն:

-Պարոն Գրիգորյան, ի՞նչ քայլեր են պահանջվում, որպեսզի հանրապետությունում տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտն ավելի արագ զարգանա և առաջիկայում կարողանանք նկատելի առաջընթացի մասին խոսել:

- Չնայած այս մեկ տարվա ընթացքում նկատելի տեղաշարժ գրացվել է, այդուհանդերձ ինտերնետ կապի որակի բարձրացման հարցն Արցախում դեռ օրակարգային է: Որակյալ կապի խնդիր ունենք ոչ միայն

շրջաններում, այլև նաև մայրաքաղաքում: Մյուս կողմից հրատապ է բարձրակարգ մասնագետների խնդիրը: Արցախում տաղանդավոր երեխաները շատ են, բայց նրանց հետ պետք է համապատասխան համակարգված աշխատանքներ տարվեն, այլապես այդ ներուժը կկորցնենք: 



Մեկ տարի առաջ Արցախի մասին տեղեկատվություն տարածողներ՝ բլոգերներ, գրեթե չկային, ընդամենը 5-6 մարդ էր: Այսօր արդեն այդ գործում ընդգրկված անձանց թիվը հասել է շուրջ 70-ի:

Եական քայլեր ենք կատարել տեղեկատվական անվտանգության մակարդակի բարձրացման ուղղությամբ:

մով ևս առաջին արդյունքներն արդեն տեսանելի են. մեկ տարի առաջ Արցախի մասին տեղեկատվություն տարածողներ՝ բլոգերներ, գրեթե չկային, ընդամենը 5-6 մարդ էր: Այսօր արդեն այդ գործում ընդգրկված անձանց թիվը հասել է շուրջ 70-ի: Ընդ որում, բլոգերի ուղղվածությունը միայն քաղաքական չէ: Ի վերջո, աշխարհը ցանկանում է տեղեկանալ ոչ միայն հակամարտության և նրա կարգավորման ուղղված ջանքերի, այլև նաև՝ արցախցիների կյանքի

մակերպվում: Օրինակ, հունվարին եղել ենք Զարվաճառում, ապրիլին՝ Զաշաթաղում: Առայժմ սահմանափակվում ենք հիմնականում շրջկենտրոններով:

Հանրապետության տարածքում աշխատանքներն ակտիվացնելուն զուգահեռ՝





«Ղարաբաղ Տելեկոմ» ՓԲԸ գլխավոր տնօրենի տեղակալ Գեորգես Տերտերյան.
«ԼԻՆԵԼ ՏԵՂԱԿԱՆ ՕԴԵՐԱՏՈՐ, ՆՇԱՆԱԿՈՒՄ Է ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԶԳԱԼ ԱՐՅԱՆՅՈՒՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ»:

-Պարոն Տերտերյան, Արցախի խոշոր հարկատու «Ղարաբաղ Տելեկոմ»-ն ի՞նչ սկզբունքներով է առաջնորդվում, որոնց արդյունքում ընկերությանը հաջողվում է տարիներ շարունակ կայուն դիրքեր պահպանել Արցախում և կայանալ:

-Ընկերության հիմնական սկզբունքն անփոփոխ է գործունեության առաջին օրվանից առ այսօր՝ լավագույնս կատարել այն ամենը, ինչ անում ես: Լինելով տեղական օպերատոր՝ գործունեության շրջանակներում ձգտում ենք հնարավորինս հոգալ Արցախի մասին: Կատարված աշխատանքի և, առհասարակ, բոլոր գործողությունների հիմքում շատ կարևոր նպատակ կա՝ ընկալվել յուրաքանչյուր բաժանորդի ընկեր, ինչին

փորձում ենք հասնել բաժանորդի համար մատչելի սակագներ սահմանելով, որակյալ ծառայություններ մատուցելով, որակը մշտապես կատարելագործելով և նորամուծություններ կիրառելով: Օրինակ, 2010-ի նոյեմբերից մինչ օրս (9 ամսվա ընթացքում) ինտերնետի սակագները գրեթե 40 անգամ իջեցրել ենք (1 Մբիթ/վայրկյանի համար 350,000 դրամից մինչև 8,799): Բաժանորդներին անընդհատ անակնկալներ ենք մատուցում՝ շարունակական ակցիաների տեսքով: Նույնը վերաբերում է նաև ձայնային և SMS ծառայությունների սակագներին: Բացի այդ, 2010-ի օգոստոսից անլար ֆիքսված հեռախոսակապի ծառայություններից օգտվում են նաև գյուղական բնակավայրերի բաժանորդները: Օպտիկամանրաթելային մալուխ ենք անցկացրել Տեղ

Շուրջ երեք միլիարդ դրամի աջակցություն՝ արցախյան սոցիալ-տնտեսական կյանքը բարելավելու նպատակով: Ղարաբաղում վստահելի գործընկերոջ համբավ ունեցող «Ղարաբաղ Տելեկոմ»-ը կանգ չի առնում. նոր ներդրումներ, նոր նվաճումներ, նոր տեխնոլոգիաներ... Սա այն եզակի ընկերություններից է, որը շահույթ ստանալով՝ մտածում է՝ ինչպե՞ս այն վերադարձնել քաղաքացուն: Ընկերությունը առաջին իսկ տարվանից խոշոր հարկատու է, նշանակում է՝ բարեխղճորեն է վճարում բոլոր հարկերը՝ այդպիսով նպաստելով արցախյան տնտեսության զարգացմանը: Բայց արված գործը փաստում է՝ «Ղարաբաղ Տելեկոմ»-ը չի սահմանափակվում միայն պարտաճանաչ հարկատու լինելով: Ավելին՝ ընկերության առաջիկա ծրագրերը ցույց են տալիս, որ նորամուծությունների և նոր ներդրումների պակաս արցախցիները չեն զգա նաև հետագայում:

գյուղից մինչև Ստեփանակերտ: Այս պահին էլ աշխատում ենք 3-րդ սերնդի համակարգի ներդրման, ինչպես նաև՝ Ստեփանակերտում օպտիկամանրաթելային մալուխի անցկացման ուղղությամբ: Արդեն իսկ սկսել ենք համապատասխան սարքավորումներ ձեռք բերել:

-«Ղարաբաղ Տելեկոմ»-ի ղեկավարությունն արմատական փոփոխություններ է խոստանում ծառայությունների բազմազանության ոլորտում: Բաժանորդները ե՞րբ կարող են նորություններ ակնկալել:

Անցած տարեվերջին իջեցրել ենք հեռախոսագների սակագները՝ մինչև 23%՝ տեղական և 40%՝ դեպի Հայաստան կատարվող զանգերի համար: Այս տարվա հուլիսից էլ սակագներն իջեցրել ենք մինչև 20%:

-Այդ ուղղությամբ արդեն իսկ աշխատանքներ են տարվում: Այնպես որ, մոտ ապագայում մի նորույթը հաջորդելու է մյուսին: Մայիսից ֆիքսված լայնաշերտ ինտերնետ կապի ծառայություններ ենք տրամադրում «Կոմֆորտ անսահմանափակ»



սակագնային պլանով, որով անշարժ ցանցով բարձր արագությամբ ինտերնետ ենք տրամադրում՝ իջեցված սակագներով:

Անցած տարեվերջին իջեցրել ենք հեռախոսագների սակագները՝ մինչև 23%՝ տեղական և 40%՝ դեպի Հայաստան կատարվող զանգերի համար: Այս տարվա հուլիսից էլ սակագներն իջեցրել ենք մինչև 20%: Բացի այդ, 2010-ի դեկտեմբերին էապես իջեցվել են միջազգային զանգերի սակագները՝ մինչև 84%:

Այժմ «Յեքիաթային աշուն» ակցիա է հայտարարված: Բոլոր այն բաժանորդները, ովքեր օգոստոսին կմիանան մեզ, ամբողջ աշնան ընթացքում որևէ վճարում չեն կատարի: Դա հավասար է տարեկան վճարը 25%-ով նվազեցնելուն: Բացի այդ, «Ղարաբաղ Տելեկոմ»-ը Wi-Fi անլար սարքեր է առաջակում առանց միացման որևէ վճարի. դա այն բաժանորդների համար, ովքեր կբաժանորդագրվեն կամ արդեն իսկ ունեն 1Մբ/վ և ավելի արագություն: Չուգահեռ մեր թիմն աշխատում է լրացուցիչ նոր ծառայությունների վրա, որպեսզի արցախյան շուկան դարձնենք ժամանակակից ու ավելի բազմազան:

կարգով կունենանք լայնաշերտ բջջային ինտերնետ Ստեփանակերտում, շրջկենտրոններում և ճարտար գյուղում: Համապատասխան աշխատանքներ են տարվում, որպեսզի բոլոր գյուղական բնակավայրերում էլ ինտերնետը լիարժեք հասանելի լինի:

Արցախի զարգացման գործում «Ղարաբաղ Տելեկոմ»-ի դերը չափազանց մեծ է:

-Հեռահաղորդակցության ոլորտը յուրաքանչյուր պետության տնտեսության զարգացման հիմնական շարժիչ-



2010-ի օգոստոսից անլար ֆիքսված հեռախոսակապի ծառայություններից օգտվում են նաև գյուղական բնակավայրերի բաժանորդները:

Այս պահին էլ աշխատում ենք 3-րդ սերնդի համակարգի ներդրման, ինչպես նաև՝ Ստեփանակերտում օպտիկամանրաթելային մալուխի անցկացման ուղղությամբ:

ներից է, և չափազանցություն չի լինի, եթե ասենք, որ հեռահաղորդակցությունը կարևոր և ճակատագրա-

կան դեր է խաղում երկրի սոցիալ-տնտեսական կյանքում: Անմիջական ներդրումը՝ նախ հարկերի պարտաճանաչ վճարումն է: «Ղարաբաղ Տելեկոմ»-ն աջակ-

կողմից, «Ղարաբաղ Տելեկոմ»-ը պատասխանատվություն է զգում Արցախի ժողովրդի նկատմամբ. կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ծրագրի միջոցով աջակցություն է տրամադրվում տարբեր ոլորտներին և հատկապես՝ առողջապահական համակարգին: Այս առումով պետք է նշեմ, որ «Ղարաբաղ Տելեկոմ»-ը 2003-ից Արցախի սոցիալ-տնտեսական զարգացման նպատակով ավելի քան 3 միլիարդ դրամի աջակցություն է ցուցաբերել: Սակայն այդքանով չենք սահմանափակվելու. առաջիկայում նախատեսում ենք սերտորեն համագործակցել Արցախի պետական համալսարանի հետ՝ ընտրե-

«ՅԵԿԻԱԹԱՅԻՆ ԱՇՈՒՆ»-ԻՑ ՄԻՆՉԵՎ 3G.

«ՂԱՐԱԲԱՂ ՏԵԼԵԿՈՄ»-Ը՝ ՆՈՐ ԲԱՐՁՈՒՆՔՆԵՐՈՒՄ

Ոչ միայն աշխարհը բերել Արցախ, այլ նաև արցախցուն պահել իր երկրում

Պարոն Տերտեյան, իսկ շրջանների բնակիչները կարող են հույս ունենալ, որ իրենք ևս ինտերնետով կապահովվեն: Այս ուղղությամբ որևէ ծրագիր մշակվում է:

-Ինտերնետն արդեն իսկ հասել է շրջկենտրոններ: 3-րդ սերնդի համա-

ցում է մեր Արցախի զարգացմանը՝ բնակելի տարածքների 98%-ն ապահովելով բջջային ծածկույթով, անշարժ, անլար ֆիքսված և ինտերնետ կապով (այժմ DSL մոդեմով, իսկ առաջիկայում նաև՝ 3-րդ սերնդի սարքավորումներով և օպտիկամանրաթելային մալուխով): Մյուս

լով լավագույն ուսանողներին և հնարավորություն տալով նրանց արակտիկան անցկացնել մեր ընկերության տարբեր բաժիններում: Այդպիսով մրցունակ և որակյալ մասնագետներ կպատրաստենք, որոնք ոչ մի պարագայում չեն ցանկանա լքել մեր Արցախը:

«AM», ԹԵ՛ «NK.AM». ՊԱՏԿԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ ԽՈՐՀՐԴԱՆՇՈՂ ՎԻՐՏՈՒԱԼ ZONA-Ն ԸՆԴԱՅՆՎՈՒՄ Է

1993թ. ինտերնետն առաջին անգամ հասավ Արցախ: Նախաձեռնության հեղինակը՝ Սամվել Մայիլյանը, հիշում է՝ սկզբնական շրջանում Արցախին բաժին էր հասնում 1,2 կիլոբիթ/վրկ արագությամբ ինտերնետ կապ: Պատկերացրե՛ք՝ դա զիջում է այսօր պարզապես հեռախոսային լարով միայն մեկ բաժանորդին տրվող կապին: Ընդ որում, սկզբում միայն Էլեկտրոնային փոստն էր գործում:

1994-95թթ. Ստեփանակերտում սկսում է գործել հայաստանյան «Արմինկո» ընկերության արցախյան ներկայացուցչություն: Նախաձեռնությունն արցախցի մի խումբ էնտուզիաստներինն էր: Այնուհետև Արցախում հիմնադրվում է «Արմինկո-Նկ» ընկերությունը, որն էլ երկար տարիներ միակ ինտերնետ ներմուծողն էր հանդիսանում:

Ներմուծվող ծավալը շատ չէր՝ 14,4 կիլոբիթ/վրկ: Բայց ժամանակի ընթացքում դա էլ է սկսում չբավարարել: Ինտերնետի արագ զարգացող աշխարհը համարժեք արձագանք և մշտական փոփոխություններ էր պահանջում: «Սկզբում ինտերնետ կապն Արցախում օգտագործվում էր պարզապես Էլեկտրոնային փոստի ծառայությունից օգտվելու համար, ավելի ուշ հասանելի դարձան համացանցի մյուս հնարավորությունները: Նաև դա էր ստիպում ինտերնետի որակը բարձրացնելու ուղղությամբ

յամբ մշտապես քայլեր ձեռնարկել», - նշում է «Արմինկո-Նկ»-ի ղեկավարը:

1996-2002թթ. ընկերությունն Արցախն ինտերնետ կապով էր ապահովում՝ համապատասխան պայմանագրեր կնքելով միջազգային կառույցների հետ: 2002թ.-ն ընկերությունում առանձնացնում

Այսօր արդեն միայն «am» գոտում 20 հազարից ավելի կայքեր են գործում, որոնցից միայն 100-ն են արցախյան ծագմամբ:

են՝ որպես շրջադարձային տարի. «Արմինկո-Նկ»-ն սկսեց համացանցին միանալ ինքնուրույն՝ առանց երրորդ կողմի մասնակցության: Այդուհանդերձ, ընկերության առաջարկած ծառայությունների ցանկում էական փոփոխություններ չեղան: Ինչպես և նախկինում՝ հիմնական ծառայությունն ինտերնետ կապի ապահովումն էր: Հետագայում գործունեության դաշտն ավելի է ընդլայնվում: «Եթե սկզբում խոսքը միայն համակարգչային ծառայությունների մասին էր, ապա վերջին շրջանում այդ շարքը համարել էն նաև տեղային ցանցերի ձևավորումն ու սպասարկումը, հեռակառավարման և հսկողության համակարգերը, բազմաթիվ ծրագրերը: Եվ դա դեռ վերջը չէ», - թվարկում է «Արմինկո-Նկ» ընկերության ղեկավարը՝ նշելով, որ աշխատանքների այլ ոլորտ էլ կա՝ կայքե-



**Հայկական
կայքէջերի զգալի
մասը գործում է «am»
գոտում, իսկ արցախյան
ինտերնետային էջերի
դեպքում «am»-ին նաև
«nk» է ավելանում՝
«nk.am»:**

րի ստեղծումը: «Ճիշտ է, այս առումով առայժմ մեծ ծավալների մասին խոսել չեմ կարող, բայց աճի միտումը նկատելի է: Այդ կայքերը կարող են լինել ինչպես պաշտոնական, այնպես էլ մասնավոր: Հայկական կայքէջերի զգալի մասը գործում է «am» գոտում, իսկ արցախյան ինտերնետային էջերի դեպքում «am»-ին նաև «nk» է ավելանում՝ «nk.am»:

Ոլորտի ակտիվության մակարդակը բնորոշող մի քանի թվեր, որ մատնանշում է Սամվել Մայիլյանը. այսօր արդեն միայն «am» գոտում 20 հազարից ավելի կայքեր են գործում, որոնցից միայն 100-ն են արցախյան ծագմամբ: Ոլորտի պատասխանատուի տվյալներով՝ արցախյան կայքերի թիվը, բնականաբար, ավելի մեծ է, բայց ոչ բոլորն են գրանցված «am» կամ «nk.am» գոտում: Սամվել Մայիլյանը դա ցավալի փաստ է համարում. «Ի վերջո, ցանկացած տարածք, անգամ վիրտուալ, պատկանելիության հետ է ասոցացվում: Նոր կայքեր ստեղծելու կամ դրանք տեղադրելու հարցերով մեզ դիմողներին, որպես կանոն, հորդորում ենք՝ կայքը պատկանելիությունը խորհրդանշող գոտում պահել»:

«Արմինկո-նկ»-ն, ի դեպ, Արցախում միակ կազմակերպությունն է, որը հնարավորություն ունի կայքեր գրանցել «am» կամ «nk.am» տարածքներում ինքնուրույն՝ առանց լրացուցիչ կողմ ներգրավելու:

Փոքր շուկա, տեղական, ներքին պահանջարկի ցածր մակարդակ, մասնագետների պակաս, իսկ առանձին դեպքերում՝ բացակայություն... Արցախում այս ոլորտի արագ զարգացմանը խոչընդոտող հանգամանքներն են:

**Արցախում
ինտերնետի հետ
գործ ունեցող մարդկանց թիվն աճում է,
զուգահեռ նաև ինտերնետի պահանջարկն է
մեծանում:**



Պահանջարկի աճին զուգահեռ, քայլեր են ձեռնարկվում նաև որակի բարելավման ուղղությամբ: Ստեփանակերտում արդեն իսկ ընթացքի մեջ են օպտիկամանրաթելային մալուխների ցանցի անցկացման աշխատանքները:

Առաջիկայում արցախցիները որոշակի բազմազանություն կնկատեն նաև առաջարկվող ծառայությունների ցանկում: Նորույթը հատկապես կազմակերպություններին ու գործարարներին է վերաբերում,

Բոլոր դեպքերում վիճակագրությունը լավատեսություն է ներշնչում. Արցախում ինտերնետի հետ գործ ունեցող մարդկանց թիվն աճում է, զուգահեռ նաև ինտերնետի պահանջարկն է մեծանում:

Հետևաբար ինտերնետ-ծառայություն մատուցող ընկերությունն էլ փորձում է ներմուծման ծավալները մեծացնել՝ բարելավելով որակը: Այսպես, եթե 1993-ին Արցախ բերվող ինտերնետը կազմում էր 1,2 կիլոբիթ/վրկ, ապա ժամանակի ընթացքում այն աճել է: Դրական փոփոխությունը նկատելի է հատկապես վերջին տարիներին:

2008-ին «Արմինկո-նկ»-ի կողմից ապահովվում էր 10 մեգաբիթ/վրկ ինտերնետ, 2009-ին այդ ծավալները հասնում էին 30-ի, իսկ 2010-ին արդեն խոսքը 50 մեգաբիթ/վրկ-ի մասին էր:

Նաև սակագնային տեղաշարժ է արձանագրվում: Ինտերնետը դառնում է ավելի մատչելի: Միայն վերջին մեկ տարվա ընթացքում սակագները գրեթե 5 անգամ նվազել են:



Առաջիկայում արցախցիները որոշակի բազմազանություն կնկատեն նաև առաջարկվող ծառայությունների ցանկում: Նորույթը հատկապես կազմակերպություններին ու գործարարներին է վերաբերում, ովքեր կարող են օգտվել ներդրվող հեռակառավարման և հսկողական համակարգերից: Առաջին հաջողված փորձն արդեն կա. այդպիսի համակարգ ներդրվել է «Արցախ ՀԷԿ»-ում:

ովքեր կարող են օգտվել ներդրվող հեռակառավարման և հսկողական համակարգերից: Առաջին հաջողված փորձն արդեն կա. այդպիսի համակարգ ներդրվել է «Արցախ ՀԷԿ»-ում: Իհարկե, այս դեպքում էլ օրակարգային է այդ համակարգերը սպասարկող մասնագետների խնդիրը: Առայժմ այդ գործառույթի պատասխանատուները «Արմինկո-նկ»-ի աշխատակիցներն են: ☑



Արցախյան IT ոլորտում բեկում է սպասվում: Տեղեկատվական տեխնոլոգիաներն այն բնագավառն է, որտեղ ներկայացված արցախյան ընկերությունները անձնական շահի մասին ամենավերջում են հիշում: «Խոսում է երկրի շահը, ուրեմն պետք է լռի մրցակցությունը». սա արտահայտություն է, որը հենց իրենք՝ գործարարներն են մատնանշում, ավելին՝ գործելաոճ դարձած սկզբունքի են վերածել: Այս համատեքստում IT մասնագետներին ոգևորել է պետության հերթական նախաձեռնությունը՝ Ձեռնարկությունների ինկուբատոր ստեղծել, ինչի իրագործումը սարերի հետևում չէ: Մինչ այդ, կայքեր կոտրելու մոլուցք ունեցող հակերները, ովքեր իրենց «ցույց են տալիս» հատկապես յուրաքանչյուր տոնից առաջ, սկսել են զգաստանալ. հակառակ կողմում գործի է անցել «INNOVA»-ն:

«INNOVA» ՄՊԸ տնօրեն Սերգեյ Գաբրիելյան.

«ՈՐՔԱՆ ՇԱՏ ԼԻՆԵՆ ՈԼՈՐՏՈՒ ՎԱՅԱՅԱԾ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՅՆՔԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԼԻՆԻ ԱՐՑԱԽԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԳՈՐԾԸ»

-Պարոն Գաբրիելյան, ինչպե՞ս սկսվեց «INNOVA»-ի գործունեությունն Արցախում: Սկզբնական շրջանում ո՞րն էր գործունեության բնույթը:

-Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում գոնե նվազագույն հնարավորություններ ապահովելու համար սկզբում համակարգիչների և հարակից տեխնիկական միջոցների առևտրով էինք զբաղվում: Չուզահեռ համակարգչային ծառայություններ էինք մատու-

նողվածությունը փոխվեց, և այսօր արդեն մեր ընկերության ամբողջ ներուժը կենտրոնացրել ենք տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում: Մինչ այդ, Արցախում հայտնի էր «Ինկորպ»-ը, որը «INNOVA»-ի եւ «USՎ»-ի հիմնադիրն է: «Ինկորպ»-ի դերը մեծ էր, այսպես ասած, նախնական կապիտալի կուտակման գործում:

-Այսինքն՝ ընկերության հետագա գործունեությունն ամբողջությամբ տեղա-

ցում՝ ապահովելով նաև սպասարկումը: Ժամանակի ընթացքում գործունեության

փոխվելու է տեղեկատվական տեխնոլոգիաների դաշտ:

-Այսօր դա մեր հիմնական ծրագիրն է, և ՏՏ բնագավառում լիարժեք ներկայացված կլինենք արդեն 2012-ին: Իսկ մինչ այդ «INNOVA»-ն կշարունակի զբաղվել ինչպես համակարգչային տեխնիկայի և հարակից սարքավորումների վաճառքով, այնպես էլ այդ տեխնիկայի սպասարկմամբ, ծրագրավորմամբ, ներքին ցանցերի անցկացմամբ ու նաև դրանց հետագա սպասարկմամբ: Ժամանակի հետ նաև պահանջներն են փոխվում: Պետական և մասնավոր կառույցների համար ինտերնետն այլևս անփո-



խարինելի է: Կազմակերպությունների գերակշիռ մասը նախընտրում է պաշտոնական կայքէջ ունենալ, քանի որ դա ներկայանալու և հասարակության հետ մշտական շփման մեջ լինելու լավագույն տարբերակն է: Կայքէջեր պատրաստելն ու սպասարկելը ևս մեր ընկերության գործառնություններից է:

-Իսկ Ձեր ընկերությունն իրականացնո՞ւմ է այդ կայքերի անվտանգության ապահովումը:

-Իհարկե: Կայքերի անվտանգության ապահովման գործում շատ անելիք ենք ունենում հատկապես տոների նախօրեին, երբ հակերներն ակտիվացնում են հարձակումներն արցախյան ծագում ունեցող կայքերի դեմ: Բացի այդ, մեր ընկերությունը հնարավորություն ունի իր պատրաստած կայքերը տեղադրել «am» կամ «nk.am» տիրույթներում:

-Արցախում տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի մասնագետների պակաս կա: «INNOVA»-ում այդ խնդիրն ինչպե՞ս է կարգավորվում:

-Դա, իրոք, կարևոր խնդիր է: ՏՏ ոլորտի պոտենցիալ մասնագետներին փոր-

տաբեր ոլորտ լինել: Միայն թե ակնկալած արդյունքի հասնելու համար միայն ԲՈՒՀ ավարտելը բավարար չէ. պետք է անընդհատ վերապատրաստվել և կատարելագործվել: Այդ մասին առաջին հերթին պետք է գործատուն մտածի:

-Ընկերության հետագա զարգացման ի՞նչ ծրագրեր ունեք: Այդ առումով հաշվի առնո՞ւմ եք Ձեր մատուցած ծառայությունների ընդհանուր պահանջարկը:

-Այստեղ նախ պետք է նշեմ, որ պահանջարկն աճում է: Դրան նաև ընդհանուր քաղաքականությունն է նպաստում: Պետական կառավարչական հիմնարկներն այսօր ոչ միայն պաշտոնական կայք ունեն, այլ նաև ներքին ցանցով են ապահովված, ինչը ևս մշտական սպասարկում է պահանջում: Արցախյան ընկերություններն ու մասնագետները փորձում են նաև արտաքին աշխարհում ներկայանալ, և, պետք է նշել, դա նրանց հաջողվում է, թեև դժվարություններն այստեղ դեռևս շատ են, իսկ արդյունքներն էլ՝ բավականին համեստ: Ի դեպ, արդեն պատվերներ ենք ստանում նաև արտասահմանից:



Մեզ ոգևորում է պետության ընդգծված ուշադրությունը տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի նկատմամբ, ինչն ավելի ակտիվացավ հատկապես վերջին տարիներին: Արցախում նախատեսվում է ձեռնարկությունների ինկուբատոր ստեղծել, ինչը շատ կարևոր է հատկապես նորաստեղծ՝ ոլորտում առաջին քայլերը կատարող ձեռնարկությունների համար:

հատկապես վերջին տարիներին: Արցախում նախատեսվում է ձեռնարկությունների ինկուբատոր ստեղծել,

«INNOVA»-Ի

ՏԻՐՈՒՅԹՈՒՄ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆԸ ՏԵՂ ԶԿԱ.

ծում ենք փնտրել 15-20 տարեկանների շրջանում: Առաջադեմ երիտասարդները շատ են, պարզապես նրանց պետք է բացահայտել, զարգացնել և գործնականում ապացուցել, որ սա կարող է եկամ-

-Այս ոլորտը նաև երկրի ղեկավարության ուշադրության կենտրոնում է: Կարևորագույն այդ հանգամանքն ինչպե՞ս է անդրադառնում ընկերության գործունեության և, առհասարակ, զարգացման վրա:

-Պետական քաղաքականությունը մեր ընկերության զարգացման գործում կարևոր տեղ ունի: Այս առումով մեզ ոգևորում է պետության ընդգծված ուշադրությունը տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի նկատմամբ, ինչն ավելի ակտիվացավ

Առաջնորդողն Արցախի շահն է

ինչը շատ կարևոր է հատկապես նորաստեղծ՝ ոլորտում առաջին քայլերը կատարող ձեռնարկությունների համար: Որքան շատ լինեն ոլորտում կայացած կազմակերպություններ, այնքան արդյունավետ կլինի Արցախը միջազգային շուկայում ներկայացնելու գործը: Մեր երկրի շահն ամեն ինչից վեր է, ինչը պետք է համախմբի ոլորտում գործող ընկերություններին և գործընկերային մթնոլորտ ձևավորի: Այս պարագայում մրցակցությունը պետք է վերջին պլան մղվի:

Կայքերի անվտանգության ապահովման գործում շատ անելիք ենք ունենում հատկապես տոների նախօրեին, երբ հակերներն ակտիվացնում են հարձակումներն արցախյան ծագում ունեցող կայքերի դեմ:





Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին, երբ նավթի հետ կապված պարբերաբար խնդիրներ էին առաջանում, ԱՄՆ-ն, Բրազիլիան և Եվրոպական շատ պետություններ շրջվեցին դեպի փայտանյութից ստացվող բիովառելիքը: Այդուհանդերձ, արդեն հետպատերազմյան ժամանակաշրջանում, երբ նավթը բավականին մատչելի էր, իսկ նրա ծավալներն անսպառ էին թվում, բիովառելիքի նկատմամբ հետաքրքրությունն անցավ: Այսօր, սակայն, նավթային շուկաներում իրավիճակը փոխվում է. սև ոսկու պաշարները նվազում են, գներն էլ՝ աճում՝ այդպիսով դարձյալ հրատապ դարձնելով այլընտրանքային աղբյուրների օգտագործումը:

ԱՐՑԱՒՆԻ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ Ե ԴԱՌՆԱԼՈՒ. ԲԻՈԷՆԵՐԳԻԱՆ՝ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԱՅԼՆՆՍՏՐԱՆՔ


Օգտակար հանածոների պաշարն անսպառ չէ. որպես վերջնաժամկետ գիտնականները մի քանի տասնյակ տարի են մատնանշում, ինչից հետո գազի կամ նավթի փոխարինման խնդիրը շատ երկրների չի կարող շրջանցել: Այս տեսանկյունից պետությունների օրակարգում ամենահրատապ հարցերից մեկն էներգիայի այլընտրանքային աղբյուրների որոնումն է:

Էներգետիկ անկախ պետություն է հավակնում դառնալ Արցախը, որտեղ համապատասխան ծրագիր են մշակել և իրագործում՝ անվանելով այն ռազմավարական: Ծրագրում ներառված մի շարք կարևորագույն քայլեր արդեն իսկ իրականացվել են:

Այսպես, 2007-ին սկսվել է Արցախի ջրային ռեսուրսների յուրացման գործընթացը: Շահագործման է հանձնվել երկու փոքր ՀԷԿ, ևս չորսի շինարարությունը կավարտվի այս տարի: Ծրագրում բավականին ակտիվ ներգրավված է նաև մասնավոր հատվածը:

Բիոէներգիայի արտադրության զարգացումը բնապահպանական խնդիրներ չի առաջացնի, քանի որ որպես հումք օգտագործվելու են ոչ թե առողջ ծառերը, այլ անտառների սանիտարական մաքրումից առաջացած թափոնները:

Օրակարգում այլընտրանքային էներգիայի նոր աղբյուրների որոնումն է: Խոսքը բազմաթիվ պետություններում արդեն կայացած ճյուղի՝ բիոէներգիայի մասին է, որի արտադրության համար վերամշակվող հումք է օգտագործվում: Արցախի պարագայում դա կարող է լինել ծղոտը, եղեգը, անտառանյութը: Տեղական հումքի պաշարները լիովին բավական են ծրագիրը հաջողությամբ իրագործելու և զարգացնելու համար. սա մասնագետների գնահատականն է: Ծրագրի հեղինակները վստահեցնում են, որ բիոէներգիայի արտադրության զարգացումը բնապահպանական խնդիրներ չի առաջաց-





Օրակարգում այլընտրանքային էներգիայի նոր աղբյուրների որոնումն է: Խոսքը բազմաթիվ պետություններում արդեն կայացած ճյուղի՝ բիոէներգիայի մասին է, որի արտադրության համար վերամշակվող հումք է օգտագործվում: Արցախի պարագայում դա կարող է լինել ծղոտը, եղեգը, անտառանյութը:

Նի, քանի որ որպես հումք օգտագործվելու են ոչ թե առողջ ծառերը, այլ անտառների սանիտարական մաքրումից առաջացած թափոնները:

Մեկ խնդրի լուծումը շահավետ պայմաններ է ստեղծում մյուսի համար. այս դեպքում լրացուցիչ հնարավորություններ կապահովվի նաև գյուղատնտեսության ոլորտի զարգացման համար: Արցախում հաշվարկել են՝ այլընտրանքային էներգիայի արտադրություն սկսելով, կարելի է և գյուղօլորտում նորամուծություններ ներդնել: Հեռանկարային ծրագրերում այս խնդիրն էլ է առաջնային դիրքերում: Այս փուլում ջերմոցներ հիմնելու տարբերակներ են քննարկվում, քանի որ նոր պայմաններով ջեռուցումը շատ ավելի մատչելի կլինի:

Այդ ամենը հաշվի առնելով՝ Արցախի Նախագահը դեռևս մեկ տարի առաջ էր դիմել գործարարներին՝ հանրապետությունում էներգիայի այլընտրանքային աղբյուրների օգտագործման վերաբերյալ առաջարկներ ներկայացնելու պահանջով: Այս հարցը քննարկ-

վել է Երկրի ղեկավարի մոտ ընդլայնված խորհրդակցության ժամանակ: Ի կատարումն Նախագահ Բակո Սահակյանի հանձնարարականի՝ կառավարության նիստում քննարկվել և հաստատվել է Երկրում այլընտրանքային էներգակիրների կիրառման հայեցակարգը:

ԱՎՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆԵ

Էական տնտեսում՝ բիոէներգիայի կիրառումից ակնկալվող գլխավոր արդյունքը սա է: Դա կարևոր է հատկապես նրանց համար, ովքեր ջեռուցման համար ստիպված են մեծ գումարներ ծախսել: Որպես օրինակ նշենք, որ

միայն պետական հիմնարկները ջեռուցելուն պատկով պետությունը տարեկան հինգ միլիարդ դրամ է ծախսում: Այս տարվանից շուրջ

տասը դպրոցներում ջեռուցման նոր տիպի կաթսաների օգտագործմամբ պետությունը կարողացավ Էական տնտեսումներ կատարել՝ այդ նպատակով կատարվող ծախսերը կրճատելով 20-50 տոկոսով: Առաջիկայում

Էներգետիկ անկախ պետություն է հավակնում դառնալ Արցախը, որտեղ համապատասխան ծրագիր են մշակել և իրագործում՝ անվանելով այն ռազմավարական

Նոր համակարգով կջեռուցվեն նաև մայրաքաղաքի «Արցախ» թաղամասի բնակարանները: Առհասարակ, շինարարական հետագա աշխատանքները կատարվելու են՝ հաշվի առնելով ջեռուցման նոր համակարգերի տեղադրման հնարավորությունները: Զ



Բիովառելիքի օգտագործման հաշվին ֆինանսների տնտեսումը կարող է հսկայական լինել: Այս ոլորտում Բրազիլիայի փորձը վկայում է, որ 1979-1987թթ-ին պետությանը հաջողվել է 10.4մլրդ ԱՄՆ դոլար տնտեսել:

Նավթի ներմուծումից հրաժարված Բրազիլիան 1976-ից մինչև 2004 թվականն ընկած ժամանակահատվածում տնտեսած գումարի չափը հասցրել է...60մլրդ դոլարի:



ԲԻՈ-ՆՈՐՈՒՅԹԸ

ԷՆԵՐԳԵՏԻԿ ԶԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ Ե ԽՈՍՏԱՆՈՒՄ

Առիասարակ, այլընտրանքային Էներգակիրների կիրառումը մի շարք պետություններում հրատապ է դարձել դեռևս 1970-ականներից՝ Էներգետիկ համաշխարհային ճգնաժամի տարիներին: Վիճակագրական տվյալներով՝ 2010-ին Եվրոպայում 12մլն տոննա բիովառելիք է արտադրվել և սպառվել: 2020-ին արդեն այդ թիվը նախատեսված է գրեթե կրկնապատկել՝ հասցնելով 21մլն տոննայի: Ավանդականից դեպի այլընտրանքային Էներգակիրների կիրառմանն անցնելու հարցն այսօր օրակարգային է շատ պետություններում՝ Գերմանիա, Շվեդիա, Ավստրիա, Մեծ Բրիտանիա, ԱՄՆ, Կանադա, Դանիա, Ֆինլանդիա, Ուկրաինա, Մերձբալթյան երկրներ: Գեր-

մանիայում, օրինակ, Էլեկտրաէներգիայի 45-50 տոկոսը ստանում են քարածուխի հիմքի վրա գործող ջերմաէլեկտրակայաններից:

Մեր Արցախը ևս, որպես կանոն, ժամանակին համընթաց է քայլում: Այստեղ արդեն իսկ մեծ թափով սկսվել է բիոգանգվածի՝ բրիկետների և տաշեղի արտադրություն ծավալվել: Այդ տարբերակն, ի դեպ, այսօր ակտիվորեն փորձարկվում է Դանիայում և Շվեդիայում. Դանիան իր կարիքների 50 տոկոսն ապահովում է հենց տաշեղների հաշվին: Արցախում այս պատասխանատու գործը վստահվել է «Բիոտեխնոլոգիա» ընկերությանը:





-Պարոն Յայրիյան, ամիսներ առաջ Արցախի Նախագահի մոտ այլընտրանքային էներգիային նվիրված ընդլայնված խորհրդակցություն էր հրավիրվել, որտեղ «Բիոտեխնոլոգիա»-ի հիմնադիրը հանդես է եկել բավականին մանրամասն զեկույցով: Այսինքն՝ Արցախի համար կարևոր գործառնություններ իրականացնողներից մեկը Ձեր ընկերությունն է լինելու:

-Ամեն ինչ սկսվեց մեկ-մեկուկես տարի առաջ: Կառավարությունը գործարարներին առաջարկեց Արցախում էներգիայի այլընտրանքային աղբյուրի վերաբերյալ ներկայացնել իրենց առաջարկները: Բիոէներգետիկ արտադրություն ծավալելու գաղափարը հետաքրքրեց նաև Գագիկ Պետրոսյանին և նա համապատասխան առաջարկով դիմեց երկրի ղեկավարին: Եզրակացությունը դրական էր: Ծրագիրը կյանքի կոչելու նպատակով էլ հիմնադրվեց «Բիոտեխնոլոգիա» ընկերությունը, որն արդեն մոտ կես տարվա պատմություն ունի: Պետությունը նաև վարկավորում է այս ոլորտում աշխատելու համար ներկայացված ծրագրերը:

-Ի՞նչ է առաջարկում «Բիոտեխնոլոգիա»-ն:

-Մենք, այսպես ասած, բրիկետների և տաշեղի արտադրություն ենք սկսել՝ օգտագործելով զուտ տեղական հումքը, ինչն առաջին փուլում կարող է հաջողությամբ գործածվել ջեռուցման ոլորտում: Դա բավականին գրավիչ է. առաջին և հաջողված փորձն արդեն ունենք: Առանձնատների, կրթօջախների և հասարակական նշանակության ջեռուցման համար անհրաժեշտ են հատուկ կաթսաներ: Դրանք պատվիրելու



«Բիոտեխնոլոգիա»-ի գործադիր տնօրեն Գեորգի Յայրիյան.

«ՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ ՀԱՅՈՂՈՒԹՅԱՄԲ ԵՆՔ ՍԿՍԵԼ»

նպատակով «Բիոտեխնոլոգիա»-ի հիմնադիրն այցելել է Ուկրաինա: Արդյունքում մասնավոր միջոցներով կազմակերպվել է այդ կաթսաների ներմուծումն ու տեղադրումը հանրապետության 10-ից ավելի կրթօջախներում՝ Կճողոտի, Հարությունազումերի, Դրմբոնի, Դաշուշենի, Կովսականի և մի շարք այլ համայնքների դպրոցներում և պաշտպանության բանակի զորամասերից մեկում: Մեր սպասելիքներն ավելի քան արդարացան: Բացի այդ, Ուկրաինայից ներկրված կաթսաների արտադրողից նաև պատենտն ենք գնել՝ Արցախում և Հայաստանում դրանց արտադրության իրավունքը: Ջեռուցման կաթսաների արտադրությունն արդեն իսկ սկսվել է մեր հանրապետությունում: Պատվիրել

և ստացել ենք եվրոպական արտադրության նաև այլ կաթսաներ: Բրիկետների նմուշները

փորձաքննության ենք ուղարկել Գերմանիա և ստացել միանգամայն դրական պատասխան:

-Իսկ վառելիքի պաշարների առումով հաշվարկներ կատարվե՞լ են:

-Իհարկե: Կարծում եմ՝ այդ առումով խնդիրներ չենք ունենա: Ամենահամեստ հաշվարկներով այս պահին ծրագիրը կյանքի կոչելու համար Արցախի պաշարներն ավելի քան բավարար են: Արցախյան անտառները մոտավորապես 280 հազար հեկտար են զբաղեցնում: Սանիտարական մաքրման պարագայում տարվա կտրվածքով մոտ 1մլն խորանարդ մետր հումք կունենանք: Դրան կարող ենք ավելացնել նաև ցորենի ծղոտը՝ յուրաքանչյուր հեկտարից ստացվում է 1.5-2 տոննա: Որպես հումք կարող է ծառայել նաև եղեգը:

- Եթե չեմ սխալվում, ծրագիրը մշակելիս՝ հատուկ ուշադրություն է դարձ-

Մասնագետների տվյալներով՝ Ծվեդիան կարող է դառնալ եվրոպական առաջին պետությունը, որին կհաջողվի 15 տարի անց ներքին պահանջարկն ապահովել բացառապես այլընտրանքային էներգիայի հաշվին:





Բրիկետների նմուշները փորձաքննության ենք ուղարկել Գերմանիա և ստացել միանգամայն դրական պատասխան:

Բրիկետների և տաշեղի արտադրություն ենք սկսել՝ օգտագործելով զուտ տեղական հումքը, ինչն առաջին փուլում կարող է հաջողությամբ գործածվել ջեռուցման ոլորտում:

Ջեռուցման համակարգում բիոէներգիայի կիրառմամբ պետությունը կարող է տնտեսել ծախսերի 20 տոկոսից ավելին:

վել անտառների պահպանմանը:
Դա նշանակում է, որ նման արտադրություն ծավալելը

անտառապատ տարածքների կրճատմանը չի սպառնա:

-Միանշանակ ոչ: Անտառապատ տարածքներում սանիտարական աշխատանքներ ենք իրականացնելու, ինչի արդյունքում, ինչպես նշեցի, վառելանյութի արտադրության համար բավարար հումք կունենանք: Մյուս կողմից՝ անհրաժեշտ սանիտարական աշխատանքներն իրականացնելու պարագայում նաև անտառները կառողջանան: Եթե ծրագիրը փուլ առ փուլ կյանքի կոչենք, անտառով կսկսեն զբաղվել մասնագետները, սանիտարական

մաքրումն ու ծառերի հատումը կիրականացվի միայն նրանց անմիջական հսկողությամբ: Դրա համար նաև հնարավորություններ են պետք, առաջին հերթին՝ տեխնիկական: Արդեն հնարավոր տարբերակներ ենք որոնում, և առաջիկայում կընտրվի դրանցից ամենաարդյունավետը:

Վերջին հաշվով, անգամ վառելափայտը պետք է նորմալ մշակել և դրանից հետո միայն սպառողին հասցնել: Մեզ անհրաժեշտ են չորանոցներ, սղոցարաններ: Այդ առումով «Տեխնոլոգի» ընկերության հետ մեր համագործակցությունից լուրջ ակնկալիքներ ունենք:

-Ի՞նչ ենք ունենալու հեռանկարում:

-Առաջին փուլում ուժերը կենտրոնացրել ենք Արցախում ջեռուցման նոր համակարգի ներդրման և տարածման վրա, մեր գլխավոր անելիքներից է անհրաժեշտ կաթսաների, սարքավորում-

ների, վառելիքի ապահովումը: Չուգահեռ աշխատանքներ են տարվելու անտառների քաղաքակիրթ և հեռանկարային շահագործման ուղղությամբ: Դա էլ իր հերթին կպահանջի ինչպես տեխնիկական, այնպես էլ մարդկային ներուժ: Դրան կհաջորդի մեր իսկ արտադրած հումքով ջերմաէլեկտրակայանի տեղադրումը: Ավարտական փուլում արդեն նաև հեղուկ վառելիքի արտադրություն կսկսենք:

Պետք է նշեմ, որ ծրագրում աստիճանաբար նոր ընկերություններ են ընդգրկվում, հիմնադրվում են նորերը: Մասնավորապես, նրանցից մեկն արդեն բրիկետի արտադրությամբ է զբաղ-



Արցախյան անտառները մոտավորապես 280 հազար հեկտար են զբաղեցնում: Սանիտարական մաքրման պարագայում տարվա կտրվածքով մոտ 1 մլն խորանարդ մետր հումք կունենանք: Դրան կարող ենք ավելացնել նաև ցորենի ծղոտը՝ յուրաքանչյուր հեկտարից ստացվում է 1.5-2 տոննա: Որպես հումք կարող է ծառայել նաև եղեգը:

վում Միջնաձևում, մյուսը՝ Ավետարանոցում: Սպասվում է նաև նոր ընկերությունների ներգրավումը պետական նշանակության այս կարևոր գործընթացին: 



ՀԻՇԵՔ ՀԱՐԿԱՅԻՆԸ

ՀԱՏԿԱՊԵՍ

ԱՅՍ ՕՐԵՐԻՆ

Հոկտեմբեր

I	II	III	IV	V	VI	VII
					1	2
3	4	5	6	7	8	9
10	11	12	13	14	15	16
17	18	19	20	21	22	23
24 31	25	26	27	28	29	30

բոլոր մանրամասներն այստեղ՝

www.tax.nk.am



«MLM» ընկերության գործադիր տնօրեն Յուրի Բարսեղյան.
«ՄԵՐ ԿԱՐԵՎՈՐ ՁԵՌՔԲԵՐՈՒՄԸ ԱՐՑԱԽՅԱՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ
15 ՏԱՐԻ ԱԾԽԱՏԵԼՆ Է»

-Պարոն Բարսեղյան, ինչպե՞ս «MLM»-ը մուտք գործեց արցախյան շուկա և ի՞նչ առաջարկով:

-Ընկերությունը 1996-ին է հիմնադրվել: Հետպատերազմյան շրջանում այդ ոլորտում անելիք շատ կար: Բայց որպեսզի մեզ մոտ նորույթը լիարժեք ընդունվեր, որոշակի ժամանակ պահանջվեց: Մի կողմից առաջարկվող ծառայությունը նորամուծություն էր, ընդ որում՝ թանկ, մյուս կողմից էլ՝ սպառողների մոտ մտավախություն կար: Բայց իրավիճակն ու պատկերացումներն արագ փոխվեցին: Ինչ վերաբերում է առաջարկվող տեսականուն, այն բավականին մեծ էր հենց

առաջին տարիներից՝ եվրոդոլներ, եվրոպատուհաններ, կախովի առաստաղներ:

-Այսինքն՝ կայացման դժվար ճանապարհ էր անցել:

-Սկզբում գլխավոր խնդիրը նորույթն արցախյան շուկայում ներկայացնելն էր, ինչը մեզ հաջողվեց իրագործել: Հաջորդ փուլը՝ 1997- 2005 թվականներն ընկած ժամանակահատվածն էր: Դա մենք վերելքի շրջան ենք անվանում. արցախցի սպառողն արդեն ճանաչում էր մեր արտադրանքը, պահանջարկն էլ անընդհատ աճում էր: Դրան, իհարկե,

նպաստում էր նաև մրցակցության բացակայությունը: Այս ոլորտում գործող հայտնի ընկերություն Արցախում չկար: Իսկ արդեն 2004-2005թթ.-ին այլ գործարարներ ու կազմակերպություններ ևս հետաքրքրվեցին ոլորտով՝ նախաձեռնելով նման արտադրություն: Խնդիրն այն է, որ այս գործունեության նախնական փուլում Էական ներդրումներ չեն պահանջվում, հետևաբար մրցակցությունն աստիճանաբար խստացավ: Այլ նրբություն էլ կա. սկզբում ակտիվորեն համագործակցում էինք նաև շինարարական կազմակերպությունների հետ: Բայց նրանց մեծ մասը ժամանակի ընթաց-



ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԵՎՐՈՊԱՏՈՒՀԱՆԻՅ

«Եվրո»-ն Արցախ մտավ պատերազմից անմիջապես հետո: Արցախցի, գիտեք, բժախնդիր Է. Նորոյթն ընդունելուց առաջ հաստատ մի լավ ուսումնասիրում է, զննում, փորձարկում և հետո որոշում կայացնում՝ ընդունե՞լ այն, թե՞ ոչ: «MLM»-ը դա չիմանալ չէր կարող. «Եվրոբիզնես» սկսելուց առաջ այս կազմակերպության ղեկավարությունը ևս հաշվարկների սեղանի շուրջ է նստել: Եզրահանգումը պարզ էր՝ արցախցին դռնբաց կընդունի միայն լավագույնն ու որակյալը: Եվ հենց այդ սկզբունքն էլ ընկերության համար դարձավ գործելաոճ, որի արդյունքն ակնհայտ է՝ Եվրոդռներն ու պատուհանները մտել են, կարելի է ասել, յուրաքանչյուր արցախցու տուն:

քում դռների և պատուհանների սեփական արտադրություն հիմնեց: Այնպես որ, այսօր մեր հիմնական պատվիրատուները բնակիչներն են:

- Այս տարիների ընթացքում Էական ի՞նչ ձեռքբերումներ են արձանագրվել:

- Արցախում 15 տարի աշխատելն արդեն իսկ ձեռքբերում է: Մեր գործունեության շրջանակն ընդգրկում է հանրապետության ամբողջ տարածքը: Տարվա կտրվածքով շուրջ 2 հազար քմ մակերեսով դուռ-պատուհան ենք արտադրում: Տարիների ընթացքում նաև տեսականին է ընդլայնվել: Սկզբում արտադրում էինք

Եվրոդռներ, Եվրոպատուհաններ, կախովի առաստաղներ: Այսօր այդ ցանկը շատ ավելի մեծ է՝ շերտավարագույրներ, կրպակներ, հեռակառավարվող դարպասներ: Ընտրության հնարավորություն կա նաև օգտագործվող նյութերի առումով՝ մետաղալաստ, տարբեր գույների այլումին:

-Ձեր դիտարկմամբ, հարկային դաշտը որքանո՞վ է նպաստավոր բիզնեսի համար:



Արցախում 15 տարի աշխատելն արդեն իսկ ձեռքբերում է:

Վերջին տարիներին համակարգում բարեփոխումներ են իրականացվում, հարկ վճարողների սպասարկման մակարդակն է նկատելիորեն բարձրանում. հնարավոր չէ չնկատել, որ սպասարկումն այժմ ավելի արագ և օպերատիվ է կատարվում:

-Վստահորեն կարող եմ ասել, որ պարտաճանաչ և բարեխիղճ հարկատուի համար հարկային դաշտը մեղմ է: Հատկապես որ վերջին տարիներին համակարգում բարեփոխումներ են իրականացվում, հարկ վճարողների սպասարկման մակարդակն է նկատելիորեն բարձրանում. հնարավոր չէ չնկատել, որ սպասարկումն այժմ ավելի արագ և օպերատիվ է կատարվում:

րողների սպասարկման մակարդակն է նկատելիորեն բարձրանում. հնարավոր չէ չնկատել, որ սպասարկումն այժմ ավելի արագ և օպերատիվ է կատարվում:



«Արդյունաբերական-շինարարական կոմբինատ-1» ԲԲԸ տնօրեն Միքայել Լալայան.

«ՅԵՏԱԳԱ ԾՐԱԳՐԵՐԸ ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ՝ ԿԱՐՈՂ ԵՄ ՎՍՏԱՅՈՐԵՆ ԱՍԵԼ՝ ԴԵՌ ԵՐԿԱՐ ԵՆՔ ՄՆԱԼՈՒ ԽՈՇՈՐ ՀԱՐԿԱՏՈՒՆԵՐԻ ՑԱՆԿՈՒՄ»:



-Պարոն Լալայան, այսօր արտադրական ի՞նչ ներուժ ունի Ձեր ընկերությունը:

-«Արդշին կոմբինատ-1»-ն այսօր զբաղվում է բետոնի, երկաթբետոնե կոնստրուկցիաների, ծածկի սալերի, ավազի արտադրությամբ: Առաջինը մեր ընկերությունն է Արցախում սկսել գաջի արտադրություն՝ դեռևս 2002-ին: Գործարանը մեծ չէ՝ ամսական 200-250 տոննա արտադրողականությամբ: Բայց տեղական շուկայում աշխատելու և ներկայա-նալու համար եղածն էլ բավարար է:

-Արտադրանքը հիմնականում Արցախում է իրացվում:

- Տեղական շուկայում մեր արտադրանքը բավական ճանաչված է: Գնորդներ ունենք նաև Սյունիքից: Առաջիկայում նախատեսում ենք ընդլայնել հատկա-

Առաջիկայում նախատեսում ենք ընդլայնել հատկապես գաջի արտադրության ծավալները: Իրացման հիմնական դաշտ ենք դիտարկում Արցախի ամբողջ տարածքը և Սյունիքի մարզը:

պես գաջի արտադրության ծավալները: Իրացման հիմնական դաշտ ենք դիտարկում Արցախի ամբողջ տարածքը

և Սյունիքի մարզը: Այնպես որ, սպառման հետ կապված որևէ խնդիր չի առաջանա:

-Սպառողների վստահությունը նաև պարտավորեցնում է: Ի՞նչն է հաճախորդին ստիպում հենց Ձեր արտադրանքն ընտրել:

-Մեզ համար առաջին տեղում, բնականաբար, ապրանքի որակն է: Ոչ պակաս կարևոր է նաև գնային ճկուն քաղաքականությունը: Գնորդը դա գիտակցում է. որակը մեր սպառողներին միշտ էլ գոհացրել է, նաև սահմանված գներն են մատչելի: Անգամ գազի վերջին թանկացման պայմաններում մեզ հաջողվեց հարցը կարգավորել և գերծ մնալ գաջի



գնի բարձրացումից, թեև ստիպված եղանք այդ նպատակով որոշակի դժվարություններ հաղթահարել:

-Ժամանակի ընթացքում նաև տեսակահին եք ընդլայնել:

-Բնականաբար, միայն գաջի արտադրությամբ չենք սահմանափակվում: Երկաթբետոնե ծածկերի ու տարաբնույթ կոնստրուկցիաների տեսականին է ընդլայնվում: Այլ նորույթներ էլ ենք նախատեսում. այսօր մենք հետաքրքրված ենք կավճի և տարբեր ծեփամածիկների արտադրությամբ: Այդ ապրանքատեսակների պահանջարկը ևս Արցախում մեծ է, ինչը լրացվում է ներմուծումների հաշվին: Մինչեւ հնարավորություն ունենք դրանք տեղում արտադրել: Մենք նաև ասֆալտի արտադրությամբ ենք զբաղվում: Այս առումով էլ պահանջարկի աճ կա:

-Իսկ հնարավոր չէ՞ նաև ցեմենտի ու երկաթի արտադրությունը տեղում



Օրակարգային է ցեմենտի արտադրության հարցը: Բոլորովին վերջերս ենք առաջարկ ստացել՝ Արցախում ցեմենտի արտադրություն սկսել: Ես համամիտ չեմ այն պնդումներին, թե մեր շուկան փոքր է, հետևաբար նպատակահարմար չէ այստեղ ցեմենտ արտադրել: Հավատացնում եմ, որ ինձ այդ քայլից ավելի շատ բնապահ-



Առաջինը մեր ընկերությունն է Արցախում սկսել գաջի արտադրություն՝ դեռևս 2002-ին:

ԽՈՇՈՐ ՀԱՐԿԱՏՈՒ «ԱՐԴՇԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ 1»-Ը արցախյան բիզնես-միջավայրում իրեն լավ է զգում

Խորհրդային տարիներին՝ Պրոմկոմբինատ-9», այսօր՝ «Արդյունաբերական-2-ինարարական կոմբինատ-1»: Արցախի տնտեսական դաշտի այս «մշտական բնակիչն» այստեղ իրեն լավ է զգում: Պատահական չէ, որ ընկերությունը տարիներ շարունակ հարմարավետ տեղավորվել է Արցախի խոշոր հարկատուների ցանկում՝ այդտեղ երկար մնալու մտադրությամբ: «Արդշին կոմբինատ-1»-ն Արցախում ոլորտի հիմնական խաղացողներից և նորամուծություն թելադրողներից է, որի արտադրանքը գնորդին երկար չի սպասում:

կազմակերպել՝ փոխարենը նվազեցնելով այդ ապրանքների ներմուծման ծավալները:

-Ընկերության կողմից ներմուծվող շինանյութի՝ ձեր մատնանշած ցեմենտի ու երկաթի ծավալն, իրոք, աճում է: Այս առումով պետք է նշեմ, որ երկաթի արտադրությունը տեղում կազմակերպելն անհեռանկարային է՝ շուկան փոքր է:

պանական խնդիրներն են հետ պահում, այլ ոչ թե՝ փոքր շուկա ունենալու հանգամանքը:

-Մասնագետների ներուժը բավարար է՞ Ձեր առջև դրված այդ նպատակները իրագործելու համար:

-Դա մեր հիմնական խնդիրներից է: Որակյալ մասնագետներ ունենալը

մինչև վերջին տարիները մեզ համար գերխնդիր էր: Աշխատանքներում ընդգրկված էին հիմնականում ավագ սերնդի ներկայացուցիչները, քանի որ երիտասարդները դժվարությամբ էին գնում այդ,

այսպես ասած, «սև գործ»-ին: Այսօր իրավիճակն աստիճանաբար բարելավվում է: Արդեն երիտասարդներ ունենք, ովքեր հետաքրքրված են իրենց աշխատանքով: Մենք էլ մեր կողմից ենք փորձում պայմաններ ապահովել, որպեսզի նրանք կայանան որպես մասնագետ: Այս պահին «Արդշին կոմբինատ-1»-ը 50-60 մշտական աշխատող ունի: Պահանջի դեպքում այդ թիվը հասնում է 100-ի:



«Արտադրական կոմբինատ-3»-ի
գործադիր տնօրեն Արարատ Գալստյան,
«ՈՐԱԿԻ ՀԱՇՎԻՆ ԽՆԱՅՈՂՈՒԹՅՈՒՆ
ԱՆԵԼԸ ՄԵՐ ՍԿՁԲՈՒՆՔՆԵՐԻՑ ԴՈՒՐՍ Է»

Խորհրդային ПМК-3, ОГП-3-ից հետո՝ ԱԿ-3: Փոխվել է անվանումը, բայց ոչ գործունեության ոլորտն ու գործելաոճը: Արցախում 6-7 տարի նոր անունով՝ որպես «Արտադրական կոմբինատ-3» հայտնի այս կազմակերպությունն առաջ է շարժվում՝ առանց շունչ քաշելու: Չեք հիշի մի օր, երբ ընկերությունը թեկուզև մեկ օրով դադար հայտարարած լինի: Ճիշտ այնպես, ինչպես և դրա ղեկավար Արարատ Գալստյանը. աշխատանքային ամբողջ կենսագրության ընթացքում նա ընդամենը մեկ անգամ է աշխատանքի ընդունվելու դիմում գրել...

ԽՈՐՀՐԴԱՅԻՆԻՑ ՄԻՆՉԵՎ 21-ՐԴ ԴԱՐ «ԱԿ-3»-ը՝ նոր լուծումներով

-Պարոն Գալստյան, «Արտադրական կոմբինատ-3»-ի կենսագրությունը դեռևս խորհրդային տարիներից է սկսվում, և այս ժամանակահատվածում, փաստորեն, գործունեությունը երբևէ չի ընդհատվել...

-Ժամանակին Ստեփանակերտում շինարարական երկու կազմակերպություն էր գործում: Մեկը հիմնականում բնակարանների և վարչական շենքերի շինարարությամբ էր զբաղվում, մյու-

սը՝ արդյունաբերական շինությունների կառուցմամբ: Այդ ժամանակ մեր ընկերությունը հայտնի էր որպես ПМК-3, որին վստահվել էր արդյունաբերական նշանակության այնպիսի կառույցների շինարարությունը, ինչպիսիք են՝ կահույքի, մարմարի, կոնդենսատորների գործարանները, կաթի մշակման կոմբինատը և այլն: Ցանկը բավականին ընդգրկուն է: Ճիշտ նկատեցիք՝ կազմակերպության գործունեությունը երբեք չենք դադարեցրել՝ անգամ պա-



տերազմի տարիներին: Այդ ժամանակ մեր ուշադրության կենտրոնում էին անհետաձգելի և կարևոր գործերը: Մեզ մեծածավալ աշխատանք էր սպասվում հատկապես հրադարձի հաստատումից հետո: 1994-ից հանդես էինք գալիս նախ՝ պետական կազմակերպության, ավելի ուշ՝ մասնավոր ընկերության կարգավիճակով: Վերջին տարիներին մեր կազմակերպությունը կառուցել է Ստեփանակերտի Սուրբ Հակոբ եկեղեցին, «Արմենիա» հյուրանոցը...

-Սեփականաշնորհումն անխուսափելի՞ էր:

-Ընդունված տեսակետ կա. եթե այս կամ այն ընկերությունը մասնավորեցվում է, ուրեմն լուրջ խնդիրներ ու պարտքեր ունի: Բայց դա մեր մասին չէ: Մեր պարագայում պատկերն այլ է: Կազմակերպությունն անխափան աշխատում էր, պարտքեր կամ կուտակված պարտավորություններ չուներ: Այլ բան է, որ ավելի արդյունավետ աշխատանքը մեծ ներդրումներ է պահանջում, և հենց դա էլ ապահովվեց մասնավորեցումից հետո՝ 2004-ին: Բավականին խոշոր ներդրումներ կատարվեցին, ինչի արդյունքում շինանյութի արտադրությամբ զբաղվող ընկերության գործունեությունն այդ ոլորտում էլ ավելի ընդլայնվեց:

-Եվ ի՞նչ ունենք այդ ամենի արդյունքում:

-Այսօր ընկերությունն արտադրում է բետոն, երկաթբետոնե կոնստրուկցիաներ, երկաթբետոնե ծածկեր, ջրհորներ, բարձր լարման հոսանքի համար նախատեսված էլեկտրասյուներ: Կարելի է նաեւ գաջի արտադրությունը:

-Տեղական շինանյութերի օգտագործման պարագայում ևս, բնականաբար, որակն է առաջին տեղում: Սա այն հարցերից է, որը հաճախ է բարձրացվում: Ձեր արտադրանքի հետ կապված արձագանքներն ինչպիսի՞ն են:

-Արտադրանքի որակը ԱԿ-3-ի ոչ թե թույլ, այլ ուժեղ կողմն է: Սա այն ոլորտն է, որտեղ կասկածելի որակն ուղղակի անթույլատրելի է. պատճառված վնասն այս դեպքում կարող է ճակատագրական լինել: Հետևաբար, որպեսզի բացառենք բացթողումները, արտադրանքի որակը մեր մշտական և խիստ վերահսկողության ներքո է: Ընդ որում, բոլոր արտադրատեսակներն ունեն որակի համապատասխանության անհրաժեշտ փաստաթղթեր: Առ այսօր ոչ մի բողոք չի արձանագրվել: Վստահ ենք՝ այսուհետ էլ չի լինի: Առավել ևս, որ դրա համար անհրաժեշտ պայմաններն այսօր ավելի

Կազմակերպությունն անխափան աշխատում էր, պարտքեր կամ կուտակված պարտավորություններ չուներ: Այլ բան է, որ ավելի արդյունավետ աշխատանքը մեծ ներդրումներ է պահանջում, և հենց դա էլ ապահովվեց մասնավորումից հետո՝ 2004-ին:



Արտադրանքի որակը ԱԿ-3-ի ոչ թե թույլ, այլ ուժեղ կողմն է: Սա այն ոլորտն է, որտեղ կասկածելի որակն ուղղակի անթույլատրելի է. պատճառված վնասն այս դեպքում կարող է ճակատագրական լինել: Հետևաբար, որպեսզի բացառենք բացթողումները, արտադրանքի որակը մեր մշտական և խիստ վերահսկողության ներքո է: Ընդ որում, բոլոր արտադրատեսակներն ունեն որակի համապատասխանության անհրաժեշտ փաստաթղթեր:

Դեռ Խորհրդային տարիներից հայտնի մի շարք շենքեր, պաշտպանության բանակի կարևորագույն կառույցներ... Ցանկը հարուստ է, ինչպես և շինարարական կազմակերպության կենսագրությունը: Տարիներ առաջ Արցախում գործող շինարարական ընկերություններ շատ չկային, և ավագ սերունդը շատ լավ հիշում է շինարարական այս կազմակերպությունը. այն հայտնի էր դարձել 1940-ականներից: Տարիների ընթացքում, իհարկե, ընկերության անունն էլ է փոխվել, և այսօր ԼՂՀ-ում այդ կազմակերպությունը ճանաչված է նոր անունով՝ «Սիգմա Գրուպ սերվիս» ՓԲԸ: Աշխատանքային հարուստ փորձ ունեցող ընկերություն, որակյալ մասնագետներ. այստեղ աշխատող որոշ շինարարներ կեսդարյա աշխատանքային փորձ ունեն: «Սիգմա Գրուպ»-ի տնօրեն Սերգեյ Սեյրանյանն, օրինակ, կազմակերպությունում 1976-ից է աշխատել: Սկսել է շինարարության վարպետի պաշտոնից, այնուհետև դարձել աշխույժ, մինչև ազատամարտը՝ գլխավոր ինժեներ: Ամենապատասխանատու տարիներին՝ 1992 թվականից, նրան է վստահվել ընկերությունը ղեկավարելու գործը: «Սիգմա Գրուպ սերվիս»-ի տնօրենն անփոխարինելի է առ այսօր:

70-ԱՄՅԱ «ՍԻԳՄԱ»-Ի ԵՐԻՏԱՍԱՐԴ ԾՐԱԳՐԵՐԸ

-Շինարարության վարպետ, աշխույժ, գլխավոր ինժեներ, իսկ այսօր արդեն՝ ղեկավար. պարոն Սեյրանյան, ոչ միայն Ձեր աշխատանքային կենսագրությունն է հարուստ, այլև նաև՝ ընկերության:

- Աշխատանքային կենսագրությունս՝ շինարարության վարպետից մինչև գլխավոր տնօրեն, կապված է եղել հենց այս կազմակերպության հետ և, բնականաբար, գործնականից բացի, այստեղ նաև մարդկային գործոնն է եական: Բայց անցնենք ընկերության գործունեությանը. նախագահական նստավայր, կառավարության շենք, կենտրոնական մարզադաշտ, Ստեփանակերտի մշակույթի և երիտասարդության պալատ, ինչպես նաև մի շարք հայտնի շենքեր մեր կազմակերպությունն է կառուցել: Բայց դա՝ մինչև պատերազմը: Արցախյան ազատամարտին մեր կազմակերպության մասնակցությունն ուղղակի էր: Ձեռնարկության աշխատակիցներից 80-ը զոհվել են պատերազմի ժամանակ: Բայց նույնիսկ այս պարագայում ընկերությունը շարունակում էր աշխատանքը՝ փորձելով նաև պատերազմի ավերածությունների հետևանքները վերացնել՝ գոնե այն, ինչ հնարավոր էր այդ օրերին:

Պատերազմից հետո էլ ընկերությունը կարևոր դերակատարում ունեցավ վերականգնողական աշխատանքներում: Առաջնահերթությունները հստակ էին՝ վերանորոգել ենք հոսպիտալի շենքը, սերտորեն համագործակցել պաշտպանության բանակի հետ, ինչը շարունակվում է առ այսօր: Չուգահեռ մեծ թափով

իրականացրել ենք բնակելի շենքերի, հասարակական նշանակության օբյեկտների, Արցախում՝ առաջիկա միակ ճանապարհային հանգույցի կառուցումը: Այսօր էլ մեր օրակարգում շինարարական մի շարք աշխատանքներ կան, որոնց արդյունքը տեսանելի կլինի մոտ ապագայում:

Պատերազմից հետո էլ ընկերությունը կարևոր դերակատարում ունեցավ վերականգնողական աշխատանքներում: Առաջնահերթությունները հստակ էին՝ վերանորոգել ենք հոսպիտալի շենքը, սերտորեն համագործակցել պաշտպանության բանակի հետ, ինչը շարունակվում է առ այսօր:

«Սիգմա Գրուպ սերվիս» ՓԲԸ
գլխավոր տնօրեն Սերգեյ Սեյրանյան.

«ԱՌՈՂՋ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ ԼԱՎԱԳՈՒՅՆ
ԽՈՐՀՐԱՏՈՒՆ Է. ԱՅՆ ՍՏԻՊՈՒՄ Է ՄՇՏԱՊԵՍ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԸ ՀԱՏԿԱՑՆԵԼ ՈՐԱԿԻՆ»



-Շինարարությունն այն ոլորտն է, որն Արցախում բավականին ակտիվ է: Մրցակցությունը մեծ է:

-Ամեն ինչ պետք է ժամանակի մեջ դիտարկել: Հետպատերազմյան առաջին տարիներին մրցակցությունն այս ոլորտում խիստ չէր: Մինչդեռ այսօր շինարարության և շինանյութերի արտադրության բնագավառներում տասնյակ կազմակերպություններ են գործում: Այդ փաստն, իհարկե, նաև դրական

խանատու օբյեկտների կառուցումը, պետք է որ որակյալ մասնագետներ ունենա:

-Այդ հարցում, այո, մեզ օգնում է անցած ճանապարհը: Ունենք աշխատակիցներ, ովքեր 40-45 տարվա աշխատանքային փորձ ունեն: Իսկ հայտնի Իվան Մանասյանը, ով Ստեփանակերտի պատվավոր քաղաքացի է, ընկերությունում 55 տարի է աշխատում:

Բայց դա հարցի միայն մեկ կողմն է: Ներկայումս քայլեր ենք ձեռնարկում կազ-

մը երիտասարդացնելու ուղղությամբ: Արդյունքում արդեն տասնյակ երիտասարդ մասնագետներ ունենք: Չենք անտեսում որակավորման անհրաժեշտությունը:

-Այդ ամենից բացի, «Սիգմա Գրուպ»-ը նաև խոշոր հարկատու է: Արցախյան հարկային դաշտն ապահովո՞ւմ է բիզնեսի համար անհրաժեշտ պայմանները:

- Աշխատելու համար պայմանները բավարար են: Մենք չենք մոռանում, որ շատ բան նաև հենց գործարարից է կախված. եթե աշխատում ես թափանցիկ, օրենքի շրջանակներում, պարտաճանաչ վճարում ես հարկերը՝ հաստատ որևէ խնդիր չի առաջանա: 

«Սիգմա»-ի կառուցած հայտնի շինություններից



Ձեռնարկության աշխատակիցներից 80-ը գոհվել են պատերազմի ժամանակ: Բայց նույնիսկ այս պարագայում ընկերությունը շարունակում էր աշխատանքը՝ փորձելով նաև ավերածությունների հետևանքները վերացնել:

կողմ ունի. բոլորը ստիպված են ավելի մեծ պատասխանատվությամբ վերաբերվել շինարարության որակին, նաև գնային քաղաքականությունն է կարգավորվում:

- Քանի՞ աշխատող ունի ընկերությունը:

-Կազմակերպությունն այս պահին 170-200 աշխատակից ունի: Պահանջարկի դեպքում այդ թիվը հասնում է 250-ի: Ամսական 12-15մլն դրամ աշխատավարձ ենք վճարում:

- Նման կենսագրություն ունեցող ընկերությունը, որին վստահվում է պատաս-



ՀԻՇԵՔ ՀԱՐԿԱՅԻՆԸ

ՀԱՏԿԱՊԵՍ

ԱՅՍ ՕՐԵՐԻՆ

Նոյեմբեր


I	II	III	IV	V	VI	VII
	1	2	3	4	5	6
7	8	9	10	11	12	13
14	15	16	17	18	19	20
21	22	23	24	25	26	27
28	29	30				

բոլոր մանրամասներն այստեղ՝

www.tax.nk.am



Բանկային ոլորտի առաջատար Արդշինինվեստբանկի աշխարհագրությունը բավականին մեծ է. բանկը ներկայացված է ոչ միայն Հայաստանի բոլոր մարզերում՝ համարվելով մասնաճյուղերի քանակով երկրորդը, այլ նաև ակտիվ գործունեություն է ծավալել Լեռնային Ղարաբաղում: Արցախյան գրեթե բոլոր շրջանների հաճախորդներին հասանելի է առաջարկվող ծառայությունների ամբողջ փաթեթը: Այս տարվա ընթացքում, օրինակ, բանկի վարկային պորտֆելի զգալի մասն ուղղվելու է բիզնեսի մանրածախ ուղղության խթանմանը, և այդ ռազմավարությունն ընդգծվում է նաև կառուցվածքային փոփոխություններով: Առաջիկայում Արդշինինվեստբանկը նախատեսում է շուկա մտնել նոր առաջարկով. նրանք, ովքեր գոնե մեկ անգամ սպասարկվել են այս բանկում և ունեն վարկային դրական պատմություն, կարող են մեկ օրվա ընթացքում ստանալ վարկ՝ 5մլն դրամի շրջանակներում: Եվ սա դեռ վերջը չէ...





-Պարոն Միքայելյան, «Արդշինինվեստբանկ»-ի Արցախի մասնաճյուղը հայտնի է՝ որպես կայացած կառույց: Ինչպե՞ս է հայկական երկրորդ հանրապետությունում սկսվել բանկի գործունեությունը:

-1990-ականների կեսերից հանրապետությունում գործում էր «Հայագրոբանկ»-ի մասնաճյուղը, որին 2004-ից փոխարինեց «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ն՝ որպես իրավահաջորդ: Սկզբնական շրջանում բանկի մասնաճյուղը գործում էր միայն Ստեփանակերտում: Ավելի ուշ՝ 2007-ից, «Արդշինինվեստբանկ»-ի մասնաճյուղեր բացվեցին հանրապետության բոլոր շրջաններում: Սկսեցինք Քաջաթաղի շրջանից՝ աստիճանաբար հասնելով նաև մյուս շրջաններ:

Առաջիկայում նախատեսում ենք շուկա մտնել նոր առաջարկով. նրանք, ովքեր գոնե մեկ անգամ սպասարկվել են մեզ մոտ և ունեն վարկային դրական պատմություն, կարող են 5մլն դրամի շրջանակներում վարկ ստանալ մեկ օրվա ընթացքում:

Այսօր արդեն կարող եմ ասել, որ այդ նախաձեռնությունն արդարացված էր՝ չնայած եղած ռիսկերին: Եթե տարիներ առաջ դա կարող էր ավելի շատ որպես նորույթ, շրջկենտրոնների և գյուղական բնակավայրերի բնակիչների համար նոր հնարավորություն դիտարկվել, ապա այսօր արդեն գործնական արդյունքների մասին ենք խոսում:

-Իսկ շրջաններում աշխատակիցների խնդիր չի՞ առաջանում: Ինչպե՞ս եք դա կարգավորում:

տակիցները վերապատրաստվում են Ստեփանակերտի մասնաճյուղի ավելի փորձառու մասնագետների մոտ: Արդյունքում արդեն շուրջ 75 աշխատակից ունենք:

- Վերջին տարիներին բանկերն ակտիվացրել են գործունեությունն Արցախում: Ձեր դիտարկմամբ, մրցակցային դաշտն այստեղ ի՞նչ մակարդակի վրա է:

-Բնականաբար, տարիների ընթացքում մրցակցությունն ավելի է խստանում: Եթե ժամանակին շատ բանկեր շրջանցում էին արցախյան շուկան՝ այն որպես ռիսկային գոտի դիտարկելով, ապա վերջին տարիներին այդ մոտեցումն էապես փոխվել է: Ծառ բանկեր են ձգտում

իրենց ներկայությունն ապահովել ոչ միայն Ստեփանակերտում, այլ նաև շրջաններում: Աճող և խստացող մրցակցությունը փորձում ենք հաղթահարել՝ ավելացնելով առաջարկվող ծառայությունների ցանկը և, իհարկե, բարձրացնելով սպասարկման որակը:

-Իսկ ի՞նչ է առաջարկում արցախցի հաճախորդներին «Արդշինինվեստբանկ»-ը:

-Ցանկը բավականին լայն է: Դեռևս 2005-ին «Արդշինինվեստբանկ»-ն Արցա-



«ԱՆՑԵԼ ԵՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԸ, ԵՐԲ ԱՐՑԱԽՅԱՆ ՇՈՒԿԱՆ ՌԻՍԿԱՅԻՆ ԳՈՏԻ ԵՐ ԴԻՏԱՐԿՎՈՒՄ», -

արձանագրում է ԼՂՀ բոլոր շրջաններում ներկայություն ապահոված «Արդշինինվեստբանկ»-ի Արցախի տարածաշրջանի տարածքային վարչության պետ, բանկի՝ Ստեփանակերտի մասնաճյուղի կառավարիչ Արսեն Միքայելյանը

ԲԱՆԿԱՅԻՆ ՆՈՐԱՄՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ԱՐԴՇԻՆԻՆՎԵՍՏԲԱՆԿԻՑ

-Դա մեր կարևոր խնդիրներից մեկն է, ինչն այդքան էլ հեշտ չէ կարգավորել: Բայց այս պարագայում էլ ենք գործում անփոփոխ սկզբունքով. շրջանների մասնաճյուղերում ձգտում ենք աշխատանքի վերցնել այդ հատվածի բնակիչներին: Դա մեզ հիմնականում հաջողվում է: Ընտրված նոր աշխա-

խում առաջինն էր, որ սկսեց ավտովարկեր տրամադրել: Այդ առումով այսօր արդեն ցուցանիշները բավականին տպավորիչ են. հանրապետությունում շահագործվող ավտոմեքենաներից միայն 5432-ը ձեռք է բերվել մեր բանկի տրամադրած ավտովարկի շնորհիվ: Բացի այդ, առաջարկում ենք սպա-

ռողական, լումբարդային, հիպոթեքային, կենցաղային տեխնիկա ձեռք բերելու ու նաև՝ կրեդիտային քարտերով վարկեր և այլն:

- Շրջկենտրոնների և գյուղական բնակավայրերի հաճախորդներին ո՞ր ծառայություններն են հասանելի:

-Բանկի կողմից առաջարկվող ծառայությունների ամբողջ փաթեթը հասանելի է նաև շրջակայքի և գյուղական բնակավայրերի հաճախորդներին: Ավելին, հատկապես վերջին շրջանում բավականին արդյունավետ գործունեություն ենք իրականացնում գյուղատնտեսության ոլորտում՝ տրամադրելով գյուղատնտեսական ծառայությունների համար անհրաժեշտ վարկեր: Բնականաբար, չենք մեր-


Այդ առումով, 2007-ի համեմատ, մեր վարկային պորտֆելն աճել է 47 անգամ:

Այս տարվա առաջին կիսամյակում՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, ավանդներն աճել են 27,5 տոկոսով, իսկ հաճախորդների թիվն էլ, զուտ հաշիվների սպասարկման առումով, 11 տոկոսով է աճել: 2010թ. առաջին կիսամյակի համեմատ՝ 2011թ. առաջին

յին դրական պատմություն, կարող են 5մլն դրամի շրջանակներում վարկ ստանալ մեկ օրվա ընթացքում: Եվ սա դեռ սկիզբն է:

- Հարկային համակարգի՝ վերջին տարիների բարեփոխումների ընթացքը Ձեզ գոհացնո՞ւմ է:

-Վերջին տարիներին համակարգում շոշափելի բարեփոխումներ են իրականաց-



2007-ից առ այսօր «Արդշինինվեստբանկ»-ի Ստեփանակերտի մասնաճյուղում վարկային պորտֆելն աճել է 432 տոկոսով, ինչն առավել ընդգծված է շրջաններում: Այդ առումով, 2007-ի համեմատ, մեր վարկային պորտֆելն աճել է 47 անգամ: Այս տարվա առաջին կիսամյակում՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, ավանդներն աճել են 27,5 տոկոսով, իսկ հաճախորդների թիվն էլ, զուտ հաշիվների սպասարկման առումով, 11 տոկոսով է աճել: 2010թ. առաջին կիսամյակի համեմատ՝ 2011թ. առաջին վեց ամիսներին պոտենցիալ վարկառուների թիվը ևս աճել է՝ 24 տոկոսով: 57 տոկոսով էլ աճել է պլաստիկ քարտերի ձեռքբերման համար դիմողների թիվը

Հանրապետությունում շահագործվող ավտոմեքենաներից միայն 5432-ը ձեռք է բերվել մեր բանկի տրամադրած ավտովարկի շնորհիվ:

ծում գյուղատնտեսական ոլորտին վերաբերող հիմնավորված բիզնես-նախագծերը:

- Արդյունքում ի՞նչ ձեռքբերումներ է արձանագրել «Արդշինինվեստբանկ»-ի արցախյան մասնաճյուղը:

-Սկսենք վարկային պորտֆելից: 2007-ից առ այսօր «Արդշինինվեստբանկ»-ի Ստեփանակերտի մասնաճյուղում վարկային պորտֆելն աճել է 432 տոկոսով, ինչն առավել ընդգծված է շրջաններում:



վեց ամիսներին պոտենցիալ վարկառուների թիվը ևս աճել է՝ 24 տոկոսով: 57 տոկոսով էլ աճել է պլաստիկ քարտերի ձեռքբերման համար դիմողների թիվը:

-Հավանաբար, առաջիկայում նորություններ են սպասվում Ձեր հաճախորդներին:

-Անշուշտ: Առաջիկայում նախատեսվում են շուկա մտնել նոր առաջարկով. նրանք, ովքեր գոնե մեկ անգամ սպասարկվել են մեզ մոտ և ունեն վարկա-

վել և, կարծում եմ, այս առումով ընտրված ուղղությունը միանշանակ դեպի զարգացում է տանում: Բանկային համակարգը սերտորեն առնչվում է տնտեսության այլ ճյուղերի հետ, հետևաբար մենք անմիջապես զգում ենք այդ փոփոխությունները: Արցախում գործող կազմակերպություններն ու ձեռնարկատերերը սկսել են ավելի մեծ ուշադրություն դարձնել հաշվապահությանը: Բնական է, որ այդ ամենի արդյունքում նաև մեր աշխատանքն է հեշտանում, երբ որևէ հարցով բանկին դիմած կազմակերպության կամ ձեռնարկատիրոջ բիզնես-առաջարկը գնահատելու խնդիր ենք ունենում: ☑

ՀԻՇԵՔ ՀԱՐԿԱՅԻՆԸ

ՀԱՏԿԱՊԵՍ

ԱՅՍ ՕՐԵՐԻՆ

Դեկտեմբեր

I	II	III	IV	V	VI	VII
			1	2	3	4
5	6	7	8	9	10	11
12	13	14	15	16	17	18
19	20	21	22	23	24	25
26	27	28	29	30	31	

բոլոր մանրամասներն այստեղ՝

www.tax.nk.am

ԴԱՆԻԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Փ որքիկ պետություն, որի բնակչությունը կրկնակի քիչ է, քան Մոսկվայում: Դանիացիները ստանում են աշխարհում ամենաբարձր աշխատավարձը և ռեկորդային հարկեր են փոխանցում պետությունը: Բայց նրանց շրջանում կարծիք է ձևավորվել, թե Դանիան հարուստների համար չէ:



Նոր մեքենա ձեռք բերելու համար սահմանված հարկն այստեղ ամենաբարձրն է՝ եվրոպական մյուս երկրների համեմատ: Պատկերացրեք, նոր գնված մեքենան ընդամենը գրանցելու համար պետք է վճարել ոչ ավել, ոչ պակաս... արժեքի 105 տոկոսը:

ԱՄԵՆԱՇԱՀԱՅԱՆ ԴԻՐՔԵՐՈՒՄ ՀՈՒԴԻՆՈՒՄԸ ԵՆ

Ինչպես եվրոպական մի շարք երկրներում, այնպես էլ Դանիայում հարկային համակարգը բավականին ավանդական է: Միայն որոշ հարկատեսակներով տոկոսադրույթներն ավելի բարձր են:

Հիմնական հարկը, որ վճարում են բացարձակապես բոլոր ընկերությունները՝ կորպորացիայի շահութահարկն է՝ 32 տոկոս: Ընդ որում, եթե կազմակերպությունը գրանցված է Դանիայում, այդ հարկատեսակով հարկվում են նաև դրա արտասահմանյան մասնաճյուղերը: Տարեկան 20 հազար կրոնի շրջանառություն ունեցող կազմակերպությունները պետք է լրացուցիչ գրանցվեն՝ որպես ԱԱՀ վճարողներ: Դրանից ազատվում են միայն տպագրական արտադրանք վաճառողները, փոստերը, բանկերը, կրթական և բժշկական հաստատությունները, ապահովագրական ընկերությունները և տրանսպորտը: ԱԱՀ տոկոսադրույթը 25 տոկոս է, որը վճարում է և՛ վաճառողը, և՛ գնորդը: Ինչ վերաբերում է ակցիզային հարկին, ապա Դանիայում այն առաջին հերթին ընդգրկում է նավթի արտադրանքն ու ածուխը, էլեկտրաէներգիան և էլեկտրական լամպերը: «Ալքաթոլ» չեն արել նաև «խաղային» բիզնեսը: Ավանդական ծխախոտից և ոգելից խմիչքից բացի, այդ երկրում ակցիզներով պետք է լինեն նաև հանքային ջրերը, քաղցրավենիքը, անգամ՝ թեյն ու սուրճը:

Դանիական Թագավորությունում նաև «զինանշանի» հարկ կա. այն միշտ մուծվում է փաստաթղթերի ձևակերպման պահին՝ կազմելով գործարքի գնի 0,1-4 տոկոսը:

Հարկային դաշտում ամենաշահեկան վիճակում հողիմնակներն են, որոնց համար էական արտոնություններ են գործում:

ՀԱՄԱՅՈՒՆ ԶԱՓՍԵՐԻ ԵԿԱՄՏԱՅԱՐԿԸ ԲՈՒՐԸ ՎՃԱՐՈՒՄ ԵՆ ԻՆՔՆԱԿԱՍ

Դանիացիները «գլուխ գովելու» տեղ ունեն. եկամտահարկի չափերով աշխարհում լիդերներ են: Հենց այս հարկատեսակի հաշվին է ձևավորվում Դանիայի պետությունը: Այդպիսի հսկայական մուծումների դեպքում անգամ երկրի բնակիչներն ամենևին վատ չեն ապրում: Սոցիալականների տվյալներով՝ դանիացիների մեծ մասը հայտնել է, որ իրենց ազգն ամենաերջանիկն է: Դանիայի բնակիչը եկամտահարկը վճարում է իր աշխատավարձից: Բազային դրույքաչափը 5,5 տոկոս է, առավելագույն դրույքաչափը՝ 59 տոկոս: Այդտեղ չկա այնպիսի հարկ, որը պետք է գործատուն վճարի:

Ընդհանուր առմամբ, համակարգը շատ բարդ է, որը հաճախ Դանիայում շատ արժեքավոր «արվեստ» են համարում:

ԴԱՆԻԱՑԻՆԵՐԻ ՄԵԾ ՄԱՍԸ ՄԵՓԱԿԱՆ ԲԻԶՆԵՍ ՈՒՆԻ

Դանիայում ընկերությունների գերակշիռ մասը մասնավոր է: Դրանք մի քանի տեսակի են: Ամենատարածվածը aktieselskab-ներն են /ԲԲԸ/: Այդ ընկերությունների նվազագույն կապիտալը 500 հազար կրոն է կազմում, որն ամբողջությամբ պետք է վճարվի գրանցվելուց առաջ: Քիչ չեն նաև anpartsselskab (ApS)-ները /ՍՊԸ/: Այդպիսի կազմակերպություն ստեղծելու համար պահանջվող կապիտալն ավելի փոքր է՝ 125 հազար կրոն: Կան նաև I/S-ներ՝ համատեղ ձեռնարկություններ և անհատ ձեռներեցներ: Դանիական բիզնեսի գրանցման ծառայությունը բավականին օպերատիվ է աշխատում: Սեփական գործ կարելի է բացել ընդամենը մեկ շաբաթում,

Բոլոր դեպքերում դանիացիներն իրենց սոցիալապես պաշտպանված են զգում, քանի որ թեկուզև անշահ գնաճի դեպքում նաև աշխատավարձն է բարձրանում:





իսկ անհամբեր բիզնեսմենները կարող են միանգամից «պատ-
րաստի» ընկերություն ձեռք բերել: Այդ դեպքում էլ փաստաթղ-
թերի ձևակերպումը կատարվում է մեկ օրում:

ԵՍ ՀԱՇՎԱՊԱՅ ԿԴԱՌՆԱՅԻ

Դանիացին չի ասում՝ ես հաշվապահ եմ. հաշվարկների հետ
գործ ունեցող անձն այդտեղ «տնտեսական աշխատող» է՝
տարբեր մակարդակների: Նրանց աշխատանքը սկսվում է
առավոտյան 08.00-ից և տևում է 7-8 ժամ: Հավելյալ աշխա-
տանքն ընդունված չէ: Դանիացի հաշվապահի աշխատա-
վարձը «կլորիկ» գումար է կազմում: Սկսնակ «տնտեսական
օգնականը», ով առանձնապես մեծ պատասխանատվություն
չի կրում հաշվարկների համար, վաստակում է 16-18 հազար
կրոն /շուրջ 800-900 հազար դրամ/: Իսկ ահա բարձրակարգ
տնտեսական մասնագետի աշխատավարձը ամսական շուրջ
35 հազար կրոնի է հասնում:

ԳՆԵՐՆ ՈՒ ՀԱՐԿԵՐԸ ԲԱՐՁՐ ԵՆ, ԲԱՅՑ ՍԱՐԴԻԿ ԵՐՁԱՆԻԿ ԵՆ

Դանիայում, իհարկե, կյանքն Էժան չէ: Միայն քաղաքային
տրանսպորտով երթևեկելը 15-20 կրոն է /հազար դրամից ավե-
լի/: Իսկ ծխախոտի և ալկոհոլի գներն ուղղակի սարսափեց-
նում են. դանիական կառավարությունն այդպես է պայքարում
վնասակար սովորությունների դեմ: Ավտոմեքենա պահելը
շատ թանկ է նստում տիրոջ վրա: Ամեն մի հաշվապահ չէ, որ
կարող է իրեն թույլ տալ սեփական ավտոմեքենայով գնալ աշ-
խատանքի. փոխարենը հեծանիվ կա: Նոր մեքենա ձեռք բե-
րելու համար սահմանված հարկն այստեղ ամենաբարձրն է՝
եվրոպական մյուս երկրների համեմատ: Պատկերացրեք, նոր
գնված մեքենան ընդամենը գրանցելու համար պետք է վճա-
րել ոչ ավել, ոչ պակաս... արժեքի 105 տոկոսը: Իսկ եթե ավտո-
մեքենայի գինը գերազանցում է 34.400 կրոնը, ապա արժեքի
մնացած մասը հարկվում է 180 տոկոսով: Բոլոր դեպքերում
դանիացիներն իրենց սոցիալապես պաշտպանված են զգում,
քանի որ թեկուզև աննշան գնաճի դեպքում նաև աշխատա-
վարձն է բարձրանում: Անգամ աշխատանքից ազատվելը դա-
նիացի հաշվապահին չի սարսափեցնում. չէ՞ որ գործազրկույ-
թյան նպաստը 7-10 հազար կրոն /մոտ 400-500 հազար դրամ/
է կազմում՝ բոլոր հարկերը վճարելուց հետո: Այդ գումարով
այդտեղ շատ հանգիստ կարելի է գոյատևել: Այլ հարց է, որ աշ-
խատանքի առկայությամբ է որոշվում բնակչի սոցիալական
կարգավիճակը. նպաստով ապրող մարդն այդտեղ հասարա-
կության հարգանքը չի վայելում:

ՀԱՐԿ՝ ՀԻՊՊԻՆՆԵՐԻ ՀԱՍՍԱՐ

Դանիայի մայրաքաղաքում յուրահատուկ հարկային դրախտ
կա՝ անհնազանդ ու անկախ Զրիստիանիան: Այդ շրջանը հենց
Կոպենհագենի կենտրոնում է գտնվում: Մինչև 20-րդ դարի
60-ականներն այդտեղ զինվորական կազարմաներ էին, ավե-
լի ուշ զինվորները տեղափոխվել են ավելի արժանավայել
տներ, իսկ դատարկ բարաքներն ինքնակամ զբաղեցրել են
ուսանողները, անտոններն ու հիպպիները, ովքեր իրենց
օրենքներով են ապրում: Դանիական իշխանություններին
այդպես էլ չի հաջողվել նրանց ոչ տեղահանել, և ոչ էլ օրինա-



**Զրիստիանիայի բնակիչները ստիպված են գոնե իրենց կենցաղա-
յին ծախսերի դիմաց ամսական 700 կրոն վճարել, նաև ֆիքսված
հարկ՝ 880 կրոնի չափով:**

կան դաշտ բերել: Այս պայմաններում հարկերի մասին խոսք
լինել չէր էլ կարող: Այդ թաղամասում նույնիսկ ապրանքն է
անհամեմատ Էժան /ԱՄՆ-ն այդտեղ այդպես էլ չընդունվեց/
քան ամբողջ Դանիայում: Այդուհանդերձ, այսօր Զրիստիա-
նիայի բնակիչները ստիպված են գոնե իրենց կենցաղային
ծախսերի դիմաց ամսական 700 կրոն վճարել, նաև ֆիքսված
հարկ՝ 880 կրոնի չափով: Այդ գումարը նախ տեղական «ջրիս-
տիանյան» բյուջե է գնում, իսկ հետագայում դրա մի մասն է
միայն հասնում Դանիայի պետբյուջե: Դա, սակայն, շատ չնչին
գումար է, քանի որ այդ թաղամասի բնակիչների մեծ մասն ան-
գործության նպաստով է ապրում:

ՀԱՐԿԱՏՈՒՆԵՐԻ ՄՐՁԱՆՆ ՈՒ... ԽՈՒԶԱԾ ՈՉՆԱՐՆԵՐԸ

Կոպենհագենում գտնվող
Զրիստիանսբորգ պալատն
այժմ որպես դանիական
խորհրդարանի նստավայր
է ծառայում: Այդ հաստա-
տության հսկայական պոր-
տալը պահում են չորս ատ-
լանտներ: Պատկերաց-
րեք՝ ինչ ծանրություն
են նրանք կրում իրենց
ուսերին 300 տարի շա-
րունակ: Դա դանիացի
հումորիստների ամե-
նասիրած թեմաներից
է. «Այս արձանը նվիր-
ված է դանիացի ծա-
ռայողներին, որոնց
ուսերին է ամբողջ հարկային բեռը»: Իսկ խորհրդարանի
ներսում էլ՝ նիստերի դահլիճի հարակից պատի վրա, դանիա-
ցիները հարկ են համարել հիշեցնել եկամտահարկի չափի
և այն վճարելուց հետո հարկատուի վիճակի մասին: Նկա-
րի վրա խուզած ոչխար է պատկերված, որի վրա մակագր-
ված է՝ «խուզած ոչխարների համար Աստված մեղմացնում
է կլիման»... ☑





Ստեփանակերտ, Կոմունյացների 25 հեռ.՝ (+37447) 943412

Ֆաքս.՝ (+37447) 971542

www.ab.am, www.artsakhbank.am